Azg
armenian daily

16 ԱՊՐԻԼ 2004 ՈՒՐԲԱԹ 68 (2991)

Գրադարան Ազգային Համար վիճակագրություն

Իսրայելը Թուրքիայի միջոցով զինելու է Ադրբեջանին

Անկարայի դիվանագիտական աղբյուրները հաղորդում են, որ Իսրայելը եւ Թուրքիան մոտ են մի գործարքի կնքմանը, ըստ որի Թել Ավիվն Անկարայի օժանդակությամբ զինելու է Ադրբեջանին: Ըստ «Իսռալանդ» գործակալության, համաձայնագրի շրջանակներում Իսրայելը Թուրքիային մատակարարելու է ռազմական տեխնոլոգիաներ, իսկ զենքի վերջնական հավաքումը տեղի կունենա Թուրքիայում, որտեղից էլ կարտահանվի Ադրբեջան:

Ադրբեջանը մտադիր է ճանաչել «Հյուսիսային Կիպրոսը»

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը հայտարարել է, որ իր երկիրը պատրաստ է ճանաչել «Հյուսիսային Կիպրոսը», եթե կղզու վերամիավորման նպատակով ապրիլի 24-ին կայանալիք հանրաքվեն ձախողվի, հաղորդում է «Ռոյթեր» գործակալությունը: Ներկա դրությամբ, այսպես կոչված, Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետությունը ճանաչել է միայն Թուրքիան:

«Մեր հարցադրումները նույնն են»

Հայաստանում պետք է հաստատվի օրինական իշխանություն, հայտարարում են ընդդիմության առաջնորդները

ԵՐԵՎԱՆ, 15 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Մեր հարցադրումները նույնն են, եւ մենք շատ հետեւողական ենք լինելու. Հայաստանում պետք է հաստատվի օրինական իշխանություն», ապրիլի 15-ի համատեղ ասուլիսին հայտարարեցին Ազ «Արդարություն» խմբակցության ղեկավար, Հայաստանի ժողովրդական կուսակցության նախագահ Ստեփան Դեմիրճյանը եւ «Ազգային միաբանություն» խմբակցության ղեկավար ու կուսակցության նախագահ Արտաշես Գեղամյանը:

Նրանք վերահաստատեցին, որ «ընդդիմությունը բացարձակապես կոտրված չէ եւ գիտի իր անելիքները»: Ըստ Դեմիրճյանի, Բաղրամյան պողոտայում ապրիլի լույս 13-ի գիշերը իշխանությունների գործողությունների նպատակը ոչ թե ցուցարարներին գրելն էր, այլ «մարդկանց ահաբեկելը, վախեցնելն ու ջարդելը»: Նրանք նաեւ հայտարարեցին, որ ընդդիմության ապրիլի 16-ին հրավիրված հանրահավաքն անպայման կկայանա, եւ չնայած լարված իրավիճակին՝ ժողովուրդը կցուցաբերի իրեն բնորոշ զսպվածությունը: Գեղամյանը չբացառեց հանրահավաքի վայրի փոփոխության հնարավորությունը, հաշվի առնելով, որ այդ օրը Հայաստանի ոստիկանության տոնը, ըստ նախնական տեղեկությունների, նշվելու է Ազատության հրապարակում գտնվող Օպերայի շենքում:

Անդրադառնալով երկխոսության մասին իշխանությունների կոչին, Ստեփան Դեմիրճյանը նկատեց, որ այն հնարավոր է, միայն եթե պատասխանատվության, այդ թվում նաեւ քրեական, ենթարկվեն հանցագործություններ եւ բռնություններ, նաեւ նախագահական ընտրություններում ընտրակեղծիքներ կատարած անձինք: Գեղամյանն էլ հայտարարեց, որ իրենք միշտ երկխոսության համար բաց են եղել, մինչդեռ «արդեն 6 տարի է, ինչ Ռոբերտ Քոչարյանը կիսաընդհատակ վիճակում է Հայաստանում»: «Դուրս եկեք փշալարերի ետեւից, դուրս եկեք ընդհատակից, մի վախեցեք հայ ժողովրդից, նա երբեք բռնությունների չի գնա ձեր հանդեպ, ինչպես դուք կարգադրեցիք բռնությունների դիմել ժողովրդի հանդեպ, կանանց, տարեցների, երեխաների հանդեպ», երկրի նախագահին հորդորեց Գեղամյանը, նշելով, որ Դեմիրճյանի հետ երաշխավորում է նրա անվտանգությունը:

ԳՈՐԾԻՔ ԱՆՑԱԼ ԽՈՍՔԻ

Երկխոսության պատրաստակամություն՝ երկուստեք պայմանների առաջադրմամբ

Կոալիցիան հայտարարում է, ընդդիմությունը՝ պահանջում

ՆԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Խորհրդարանական վերջին եռօրյայի տարալուծումը կոալիցիայի կողմից, ըստ «Միավորված ազգանվային կուսակցություն» խմբակցության ղեկավար Գուրգեն Արսենյանի, սխալ էր եւ ապրիլի 12-13-ի իրադարձությունների կատալիզատոր դարձավ: Իսկ ներուժ ունեցող եւ պետականության կայացման առաջին փուլն անցած Հայաստանի Հանրապետությունը կայուն է, եւ, նրա համոզմամբ, պետականության կորստի վտանգ չկա: Ինչ վերաբերում է հանրապետությունում առկա գործընթացին, ապա «ՄԱԿ»-ի ղեկավարի տեսանկյունից քաղաքական բիզնես է, որն իրականացվում է քաղաքական որսագողությամբ, ինչի մասնակիցներն են մեր հայրենակիցները:

Ավելի ուշ կոալիցիայի ներկայացրած հայտարարությունում ասվեց. «Քաղաքական դաշտում առկա անհանդուրժող եւ ծայրահեղ կեցվածքը, երկխոսության համար ի սկզբանե անընդունելի պահանջների առաջադրման մարտավարությունը, մեծացնելով լարվածությունը՝ հանգեցրին բացահայտ առճակատման»:

Եղածի առաջնային պատճառը, Արսենյանի գնահատականով, ամեն ինչում սիրողական մակարդակով գործելն է, ինչը չի նկատվել ապրիլի 13-ին ոստիկանության իրականացրած գործողություններում, որոնց պրոֆեսիոնալիզմն, ըստ Արսենյանի, պատիվ կբերեր ցանկացած երկրի: Ոստիկանության դրսեւորած պրոֆեսիոնալիզմն արժանացավ Արսենյանի երախտիքին: Նա ընդգծեց, որ ինքն իրադարձությունները որպես պրոֆեսիոնալ գնահատում է զգացմունքներից վեր կանգնած բանականության դաշտում: Ինչին գումարելով տրամաբանությունը եւս՝ Արսենյանն ապահովվել է ապրիլի 13-ի իրադարձություններն Ազ տարածքից նկարահանելու հնարավորություն իր ղեկավարած «Կենտրոն» հեռուստաընկերության նկարահանող խմբի համար:

Տես էջ 2

ԱՄՆ-ը Թուրքիայից վճռականորեն պահանջում է դադարեցնել Հայաստանի շրջափակումը

Ապրիլի 13-15-ը պատշգամական այցով Թուրքիայում էր Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը: Անկարայում Ալիեւը թուրքական իշխանություններին հորդորել է չբացել Հայաստանի հետ սահմանը, քանի դեռ հայերը դուրս չեն եկել գրավյալ տարածքներից, չի կարգավորվել դարաբաղյան խնդիրը: Ապրիլի 14-ին Բաքվում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Հարիսը մամուլի ասուլիս է հրավիրում եւ հայտարարում, որ ԱՄՆ-ը Թուրքիայից վճռականորեն պահանջում է դադարեցնել Հայաստանի շրջափակումը, հաղորդում է Բաքվի «525 գազետ» օրաթերթը:

Հարիսը նշել է, որ Հայաստանի ապաշրջափակումը բխում է հենց Թուրքիայի եւ ամբողջ տարածաշրջանի շահերից:

Ամերիկացի դեսպանը հերքել է Ադրբեջանի պատշգամության նախարար Սաֆար Աբիեւի վերջերս արած այն հայտարարությունը, համաձայն որի իբր ԱՄՆ պատշգամության քարտուղար Դոնալդ Ռամսֆելդն իր հետ հանդիպման ընթացքում արտահայտվել է դարաբաղյան կարգավորման փուլային տարբերակի լուծման օգտին: «Ես չգիտեմ ինչի մասին են խոսել Աբիեւն ու Ռամսֆելդը, բայց վստահաբար կարող եմ ասել, որ պրն Ռամսֆելդը չէր կարող նման բան ասել: Այդ հարցով մենք շատ զգույշ ենք, հատկապես հաշվի առնելով, որ մոտ օրերս տեղի է ունենալու հակամարտող կողմերի արտգործնախարարների հանդիպում», Հարիսի խոսքերը մեջբերում է «էխո» թերթը:

Այսօր Պրահայում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների մասնակցությամբ նախատեսված է արտգործնախարարներ Վարդան Օսկանյանի եւ Էլմար Մամեդյարովի հանդիպումը:

ՀԱՆՐԱՀԱՎԱՔ

Երիտասարդությունն է երկրի տերը

Երեկ Մատենադարանին հարող տարածքում երկրում ստեղծված իրավիճակի վերաբերյալ իր դիրքորոշումն էր հայտնում երիտասարդության մի սվար զանգված: Նման հավաքի միտք ծագել էր նախորդ օրը՝ մի քանի տասնյակ հասարակական, երիտասարդական, ուսանողական, իրավապաշտպան կազմակերպությունների կլոր սեղանի շուրջ: Մոտ 2000 ուսանողներ, նաեւ ընդդիմության ղեկավարներ ու կուսակցականներ միացել էին բողոքի ակցիային, որի նպատակն ու դիրքորոշումը հետեւյալն էր. «Մենք չենք ցանկանում ապրել մի երկրում, ուր քաղաքական հարցերը լուծվում են բռնության միջոցով, ուր միակ արգումենտը մահակներն են ու բռնի ուժն է: Սա մեր երկիրն է եւ մեր քաղաքն է, մենք չենք ուզում, որ մեր քաղաքը լինի ասիական հեռամնաց բռնակալության մայրաքաղաք», ասաց նախաձեռնող խմբի անդամ Հրանտ Տեր-Աբրահամյանը:

Ավետիք Իշխանյան *(Հայաստանի հելսինկյան կոմիտե)*- «Մենք այսօր հավաքվել ենք ասելու, որ երբեք չենք լինի հոտաշատակ, մենք քաղաքացիներ ենք եւ մեզ երբեք ստրկացնել չի հաջողվի: Վերջապես ոտքի է ելել այն ուժը, որի դեմ, ինչպես իրենք են ասում, խաղ չկա: Դա երիտասարդությունն է»:

Տես էջ 2

ՀԱՍԱՐՈՍ

Այսօր ոստիկանի օրն է

Այսօր ոստիկանության օրն է: Տոն՝ նվիրված մեր ոստիկաններին, որոնց պարտականությունը հասարակության եւ քաղաքացիների անվտանգությունն ապահովելն է: Արբազան պարտականություն, որ նրանք փորձում են կատարել: Սակայն հաճախ, ինչպես օրերս տեղի ունեցան հանրահավաքներում եւ հրապարակային միջադեպերի ժամանակ, նրանք մեղմ ասած, յուրօրինակ ձեւով էին կատարում իրենց այդ պարտականությունը:

Համենայն դեպս, շնորհավորում ենք մեր ոստիկաններին իրենց օրվա առթիվ, եւ որպես լրատվամիջոց առաջարկում ենք նրանց նվիրել ֆոտո եւ տեսախցիկներ: Քանզի վերջին շրջանում, հատկապես մեր ոստիկանապետները սկսել են հատուկ սեր տածել մեր մասնագիտական գործիքների նկատմամբ: Ավելին՝ սկսել են յուրօրինակ սիրով սիրել մեզ՝ լրագրողներիս, առիթը բաց չթողնելով բռունցքով, ոտքերով եւ անգամ մահակներով շոյելու մեզ:

Կարդացեք մեր վաղվա համարում

«Ազգն» իր վաղվա համարում ընթերցողին է ներկայացնում մշակութային ներդիր-հավելված: Այո, մշակութային, որը թերեւս ոմանց կողմից անհարիր թվա այս օրերի ներքին խառնակ մթնոլորտին: Սակայն ի վերջո մշակույթն է, որ կարող է սթափեցնել, զգաստացնել, խոհական դարձնել մեզ: Իսկ այս դեպքում՝ առավել եւս, քանզի վաղվա մեր համարի հյուրերն են լինելու ժողովրդական նկարիչ Հակոբ Հակոբյանը, մեծատաղանդ գրողներ Շահան Շահնուրը եւ Կոստան Զարյանը: Բարի վայելում:

ԸՆԹԱՑԻԿ

«Հանրապետություն» կուսակցությունն այսուհետեւ լեգալ վիճակում է

Երեկ, 13.20-ին «Հանրապետություն» կուսակցության գրասենյակին հարող տարածքը բազմամարդ էր: Այնտեղ էին նաեւ «Արդարություն» դաշինքի բոլոր ղեկավարները: Լրագրողների ու օտերասարների ներկայությամբ ՀԿ-ի ղեկավար Ալբերտ Բազեյանն ուժեղ հրելով բացեց իրենց գրասենյակի դուռը, որն արդեն 3 օր էր բռնագրավել էր ոստիկանությունը: Երբ ներս մտանք, առաջին պահը զարհուրելի էր: 7 համակարգիչներից մնացել էին միայն մոնիտորները, կոտրված էին մոտ 30 աթոռներ, կավե բազմոցներն ու բազկաթոռները պատառոտված, տակիները ջարդած: Մոտ մեկ ժամ հետո գրասենյակի մոտ հավաքածներին (մոտ 300 մարդ) բարձրախոսով դիմեց պրն Բազեյանը (այդ պահին տեղաց հորդառատ անձրեւ, սակայն որեւէ մեկը չշարժվեց իր տեղից), ասելով, որ «այս երկու օրերի ընթացքում թե մեր համակիրներին եւ թե անդամներին, որոնք այցելել են գրասենյակ՝ իրենց կորած ընկերների եւ իրավիճակի մասին տեղեկություններ ստանալու, կալանել տարել են կամ էլ ծեծբակալել են: Անգամ 3 օրով կալանել են գրասենյակի քարտուղարուհուն: Բռնագրավվել են նաեւ գրասենյակի առջեւ կայանված 7 ավտոմեքենաները, բազմաթիվ փաստաթղթեր ու դիսկետներ... Սա, իհարկե, անհրաժեշտ գնահատական կստանա»: Եվ հայտարարեց, որ եթե մեր բոլորի պահանջը հրեռորեն պաշտելի է, ուրեմն թող կալանավորեն բոլորիս: «Մենք բոլորս միասին ենք գործ անում, բոլորս հավասարաչափ պատասխանատու ենք այն ամենի համար, ինչ տեղի է ունենում Հայաստանում»: Նա նաեւ նշեց, որ այսուհետեւ կուսակցությունը լեգալ վիճակում է, գրասենյակում կազմակերպվել է օտերասիվ շաբ, որն էլ ամեն կերպ կփորձի տեղեկություններ հայթայթել կորածների մասին: Իսկ այդ պահին արդեն Արտակ Զեյնալյանը միջազգային մի շարք կազմակերպությունների ներկայացուցիչների մեծագույն խանդավառությամբ հրավիրում էր գրասենյակ տեսնելու այդ ավերածությունը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՆԿԱՐՅԱՆ

Երիտասարդությունն է երկրի տերը

Սկիզբը էջ 1

«Հանուն գիտության զարգացման» կազմակերպության ներկայացուցիչ **Արսեն Խառատյանն** իր ելույթում նշեց, որ «մենք ենք այս երկրի տերը եւ ոչ թե ասելու ենք ու կանգնենք, այլ փորձելու ենք անել ու մեր գործերով, մեր աշխատանքով առաջնորդել՝ օրենքի շրջանակներում: Եվ որեւէ մեկը կամ որեւէ ուժ չի կարող մեր ամբողջականությունը քայքայել: Լինենք միասնական եւ պայքարենք...»:

Հայաստանի հելսինկյան կազմակերպության ներկայացուցիչ **Բելլա Սարգսյանը** նշեց, որ «մենք ազատության սերունդ ենք եւ չպիտի լռենք այն, ինչ կատարվում է մեր շրջապատում, քանզի այդ նույնը վաղը կարող է մեր գլխին կոտրվել, մտածեք եւ մի նմանվեք այն կենդանուն, որ գլուխը մտցնում է հողի մեջ ու իրեն ուրը մտահոգված է ոչ թե իշխանության համար պայքարով, այլ որ երկրում օրենքը գերակայի: Դա էր նրանց սկզբունքը:

Գյումրու ժուռնալիստների ակումբի նախագահ **Լեւոն Բարսեղյանն** էլ իր ելույթում անդրադարձավ «Ա1+»-ի փակմանը, խոսքի ազատության ճնշմանը... «Լրագրողների դեմ բռնությունը շարունակ դատապարտում ենք եւ այդպես սայլը տեղից չի շարժվում... Եվ եկել է պահը, հավատացեք ձեր ուժերին, սիրելի երիտասարդներ», կոչ արեց նա:

«Նոր Հայաստան» ՀԿ-ից **Էլեոնորա Մանանդյանն** իր ելույթում նշեց. «Ինչպես պարել հարազատ երկրում, եթե ոտնահարված է օրենքը, ինչպես խլել սեփական քաղաքում, եթե քաղաքդ պղակալված է եւ նույնիսկ տերն էլ արդեն դու չես: Ինչպես հպարտանաս քո ազգով, եթե զրոյացված է միջազգային հեղինակությունը, ինչպես դաստիարակի հայ կինը աճող սերնդին, եթե արժեզրկված է գիտությունը: Եկեք այլեւս չփակենք ճշմարտության առջեւ, երբ երեք օր առաջ ժողովրդի նկատմամբ իրականացվել է ահաբեկչություն, որի անմիջական կատարողներն իշխանավորներն են: Յուրաքանչյուր քաղաքացի, անկախ իր քաղաքական հայացքներից, այսօր պարտավոր է դեմ դուրս գալ բռնությանը, լռությունը հավասար է ահաբեկչությանը սատարելուն: Սիրելի ոստիկաններ, ո՞րն է այն գինը, որով ծախեցիք տղամարդկությունն ու սպայի պատիվը», եւ կոչ արեց ազատ արձակել բոլոր քաղբանտարկյալներին եւ ծեծբակալվածներին:

Երիտասարդների կազմակերպած ակցիայի մասնակիցները խաղաղ երթով, առանց խախտելու երթեւեկության կանոնները, քայլեցին մինչեւ Ազգային ժողով եւ «ժողովրդավարություն», «արդարություն», «խոսքի ազատություն», «մարդու իրավունքներ», «կայունություն», այս մակագրություններով փուչիկները երթի ավարտին ամրացրին Աժ դարպասներին:

Մ. Մ.

Համալսարանը կունենա եւս մեկ մասնաճյուղ

ԵՐԵՎԱՆ, 12 ԱՊՐԻԼ, ԱՐՍԵՆ ՊՈՐԵՍ: Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի հին մասնաճյուղի հարեւանությամբ այսօր տեղի ունեցավ նոր ուսումնական մասնաճյուղի հիմնադրման արարողությունը: Ավանդույթի համաձայն ընթերցվեց աղագա սերունդներին ուղղված ուղերձը, որը տեղադրվեց օրենքի հիմքում:

ԵՊՀ ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանի խոսքերով, նոր մասնաճյուղ կառուցելու հիմնական պատճառն այն է, որ մայր բուհում սովորող 12 հազար ուսանողներին բուհի շենքային պայմաններն արդեն չեն բավարարում, առաջանում է նեղվածք, որն ազդում է բուհի աշխատանքի որակի վրա:

Թեեւ վերջնական որոշված չէ, թե որ ֆակուլտետներն են տեղափոխվելու նոր մասնաճյուղ, սակայն, ռեկտորի խոսքերով, նախատեսվում է տեղավորել հայագիտական ուղղվածության ֆակուլտետները եւ այս մասնաճյուղը դարձնել համալսարանի հայագիտական կենտրոն: Մասնաճյուղի շինարարության արժեքը 1,5 մլն դոլար է, որը հատկացրել է ՀՀ կառավարությունը, աջակցել են նաեւ բարերարները:

Հազար ուսանողի համար նախատեսված եռահարկ մասնաճյուղը նախատեսվում է շահագործման հանձնել երկու տարի անց:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Պլաստիկ քարտերի քանակն այս տարի կկրկնապատկվի

«Արմենիան քարդ» ընկերության 2003 թ. գործունեության տարեկան արդյունքները երեկ ներկայացրին ԿԲ նախագահ Տիգրան Սարգսյանը եւ ընկերության գործադիր տնօրեն Շահեն Հովհաննիսյանը: Կենտրոնական բանկի նախագահը նշեց, որ անցյալ տարի տեղի է ունեցել քարտաննների աննախադեպ աճ: 2004 թ. ապրիլի 1-ի դրությամբ համակարգում գործում են ավելի քան 30 հազար «Արքա», 12755 VISA եւ 1688 MasterCard քարտեր: Ներդրվել են նոր ծառայություններ: Մասնավորապես պլաստիկ քարտերով բանկոմատային ցանցի միջոցով կոմունալ վճարների իրականացումը, ինչպես նաեւ հեռախոսների, գազի եւ էլեկտրաէներգիայի, բջջային հեռախոսների վարձերի վճարումը, ի-գի լիցքավորման եւ ինտերնետային քարտերի վաճառքը: Այդ ծառայություններով կատարված գործարքների ծավալներն արդեն հասել են մոտ 120 մլն դրամի: Իսկ ընդհանրապես «Արքա» քարտերով մինչ այժմ կատարվել է 7 մլրդ դրամի 10 մլն գործարք: Այս համակարգին անցյալ տարի միացել են եւս 4 բանկեր՝ «Յունիբանկը», «Ինեկոբանկը», ԻԹԲ-ն, «Սելլաթբանկը»: Ներկայումս քարտերի տպագրությունն իրականացվում է Հայաստանի բոլոր մարզերում (բացառությամբ Տավուշի մարզի) եւ ԼՂՀ 17 քաղաքներում: Տպագրման կետերի թիվը 390-ն է, բանկոմատներինը՝ 31-ը: Հակառակ տպագրածի, անցյալ տարի «Արքա» համակարգը սկսել է աշխատել շահույթով, որը կազմել է 69 մլն դրամ:

ԿԲ նախագահն ու «Արմենիան քարդի» գործադիր տնօրենը հայտնեցին, որ այս տարի նախատեսվում է կրկնապատկել պլաստիկ քարտերի թիվը, միջազգային քարտերի տպագրման համար ներդնել Chip տեխնոլոգիաները: 2005 թ.-ին համակարգի գործունեության անընդհատությունն ապահովելու նպատակով պետք ստեղծվի պահուստային պրոցեսինգային կենտրոն: Դրա ստեղծման եւ Chip տեխնոլոգիաների ներդրման համար անհրաժեշտ կլինի 198 մլն դրամ, որից 115 մլն դրամը պետք է ներդրվի այս տարի:

Ա. Մ.

ՕՊԵՐԱՏԻՎ ՏՎՅԱԼՆԵՐ

Բռնություն ոստիկանության աշխատակիցների նկատմամբ

Ինչպես տեղեկացանք ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապերի եւ լրատվության վարչությունից, ապրիլի 14-ին ոստիկանության Մալաթիայի բաժնի աշխատակիցները դիմադրություն ցույց տալու համար բերման են ենթարկել 1957 թ. ծնված Գրիգոր Դ.-ին: Պարզվել է, որ վերջինս նույն օրը ոգելից խմիչք օգտագործած վիճակում վարելով հավատարմագրով իրեն հանձնված «Ռաֆ-2203» մակնիշի ավտոմեքենան, չի ենթարկվել Սեբաստիայի եւ Ռաֆֆու փողոցների խաչմերուկում ծառայություն կատարող ոստիկանության աշխատակիցների օրինական պահանջներին, նրանց քաշքշել եւ խուլիգանական արարքներ է կատարել: Գրիգոր Դ.-ն ծեծբակալված է, քննությունը վարում է դատախազությունը:

Ինքնասպանություն

Ապրիլի 14-ին ոստիկանության Արարատի բաժին ահազանգ է ստացվել, որ Սիսավան գյուղի դաշտում այրված դիակ կա: Դեպքի վայր մեկնած օպերատիվ խումբը պարզել է, որ Սիսավան գյուղի բնակիչ, 1954 թ. ծնված Սամվել Հ.-ն նույն օրն ինքնասպանություն գործելու նպատակով բարձրացել է նշված գյուղին սնուցող էլեկտրասյան վրա եւ էլեկտրահարվել: Դեպքի վայրում հայտնաբերվել է վերջինիս երկտողը՝ ինքնասպանություն գործելու մասին: Քննությունը վարում է դատախազությունը:

Ապրիլի 15-ին ՀՀ տարածքում քր. օր.-ի տարբեր հոդվածների հատկանիշներով ծեծբակալվել է 2 անձ, նույն օրը գրանցվել է նաեւ 4 ճանապարհատրանսպորտային պատահար, որի հետեւանքով 1 մարդ զոհվել է, 4-ը ստացած տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Մ. Մ.

Երկխոսության պատրաստակամություն՝ երկուստեք պայմանների առաջադրմամբ

Սկիզբը էջ 1

Աժ ծեծազրույցների երեկվա առաջին բանախոս Արսենյանը նաեւ փաստեց, որ իր գլխավորած քաղաքական միավորը գաղափարական հակառակորդ է համարում ապրիլի 13-ը կազմակերպած ուժերին: Ճեպազրույցի հաջորդ բանախոս, ժողովագամավոր Ռաֆիկ Պետրոսյանն էլ ընդգծելով, որ պետության դերը սահմանադրական կարգը պահպանելն ու երկրի բնակչության անվտանգությունն ապահովելն է, հիշեցրեց, որ պետականության խարխլմանն ուղղված յուրաքանչյուր գործողություն հարեւան երկրում մեծ ոգեւորությամբ է ընդունվում, եւ Բաքվում սկսում են ծեռքերը շփել:

Այնուհետեւ Պետրոսյանը, լրագրողների հանդեպ իրականացված բռնությունները դատապարտելով, մեղավորներին պատժելու գործընթացին հետամուտ լինելու իր պատրաստակամությունը հայտնեց եւ լրագրողներին հորդորեց համապատասխան հանձնաժողով ստեղծելու համար դիմել Աժ նախագահին: Առանց երկխոսության գործընթացի զարգացումները, Պետրոսյանի համոզմամբ, լավ բանի չեն հանգեցնի: Դե, ընդդիմությունն էլ, ի դեմս Արտաշես Գեղամյանի եւ Ստեփան Դեմիրճյանի, վերահաստատելով կատարվածին իր տված գնահատականը եւ փաստելով ընդդիմության անկոտրում կամքը, երկխոսությունը հնարավոր համարեց միմիայն բռնություններ եւ ընտրակեղծիքներ իրականացրած անձանց (ցուցակը Դեմիրճյանի հավաստմամբ արդեն կա) պատժելու դեպքում: Ինչին, Գալուստ Սահակյանի հավաստմամբ, երկխոսությունը մեծապես կարող է նպաստել: Քաղաքական կոալիցիան իր ներկայացրած հայտարարությամբ «եւս մեկ անգամ առաջարկում եւ ներկայացնում է այն խնդիրները, որոնց լուծումը ընդդիմության հետ միասնաբար երկրում կերեւակայվորի իրական առաջընթաց... հասարակությանը չտարանջատելով հաղթողների եւ պարտվողների:

1. Սահմանադրական բարեփոխումների առանցքային հոդվածները համաձայնությամբ ընդունելու հնարավորության սահմանում:

2. Միջազգային չափանիշներին լիարժեք համապատասխանող ընտրական օրենսգրքի փոփոխությունները համաձայնությամբ ընդունելու հնարավորության սահմանում:

3. Հակակոռուպցիոն պայքարում ընդդիմության գործուն մասնակցության ծեւերի մշակում:

4. Եվրախորհրդի առջեւ ստանձնած պարտավորությունների հստակ ժամանակացույցով կատարում:

Երկխոսության ընթացքում քաղաքական կոալիցիան պատրաստ է ընդդիմության առաջարկությամբ քննարկել հանդիպման օրակարգը երկրի առջեւ կանգնած այլ հիմնախնդիրներով լրացնելու հնարավորությունը»:

Իսկ Ազատության հրապարակում ապրիլի 16-ին՝ այսօր, նշվելու է ոստիկանության օրը: Նույն ժամանակ ընդդիմությունը հավատացած լինելով, որ ՀՀ-ում չարտոնագրված հանրահավաք չկա, հրավիրելու է հանրահավաք, իսկ տեղի ապահովումը համարում է իշխանության գործը: Կոալիցիան էլ գտնում է, որ հանրահավաք հրավիրելն ընդդիմության գործն է, եւ դա չի խանգարում երկխոսության գնալուն: Բացի այդ, կոալիցիան յուրաքանչյուր որոշում քննարկում է ՀՀ նախագահի հետ, եւ իշխանություն լինելով պատասխանատու է երկրում առկա յուրաքանչյուր գործընթացի համար:

Ինչ վերաբերում է ապրիլի 13-ի իրադարձությունների համար Արթուր Բաղդասարյանին անմիջական պատասխանատու համարելուն, ապա համաձայն Սամվել Բալասանյանի տրամադրած տեղեկանքի, «ՀՀ Աժ վարչական շենքի եւ դրան հարող տարածքի պահպանությունն իրականացվում է ՀՀ ոստիկանության պետական պահպանության վարչության կարեւորագույն օբյեկտների պահպանության գնդի կողմից», ինչով բացատրվում է ապրիլի 13-ին հատուկ ծառայության գնդի Աժ անցագրային կետից դուրս գալը:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 69 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Հաս. 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Լրագրողների սենյակ
/ հեռ. 581841
Համակարգ. ծառայություն
/ հեռ. 582483
Apple Macintosh
համակարգային շարուածքը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռարձակութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են. համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

Ամփոփում

Ապրիլի 13-ի գիշերվան եւ նոր անկանխատեսելի զարգացումների հնարավորության կանխմանն էր նվիրված Աժ փոխնախագահ Տիգրան Թորոսյանի մամլո ասուլիսը «Փակագիծ» ակումբում: Սա կոալիցիոն դաշտից իրադարձությունների հրապարակային վերլուծության թերեւս առաջին արտահայտությունն էր: Փոխնախագահի համոզմամբ, այն ինչ տեղի ունեցավ Երեւանում, Հայաստանում քաղաքական դաշտի թերություն որեւէ երկրի եւ որեւէ միջազգային կազմակերպության: Ինչ վերաբերում է ԱՄՆ պետդեպարտամենտի հայտարարությանը, ապա այն ըստ էության նույն շրջանակում է, ինչ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի գլխավոր քարտուղարի գնահատականը կամ վեհաժողովի նախագահի նամակը: Դրանք ընդամենը իրավիճակային գնահատականներ են, որոնց լրջորեն պիտի վերաբերվի եւ ընդդիմությունը, եւ իշխանությունը»:

միայն ինքը վերսկսի գործողությունները: Երկխոսության երկրորդ թեման կարող է դառնալ վստահության հանրաքվեի անցկացման իրավական հիմքերի քննարկումը: Ընդդիմության ու իշխանությունների համագործակցության առարկա կարող են դառնալ սահմանադրական փոփոխությունները, ընտրական գործընթացների բարելավումը, դասական համակարգի բարելավումը: Դրանց որակական փոփոխությունից է կախված անվտանգության մթնոլորտի գրումը հասարակության միջից:

Այնուամենայնիվ, փոխնախագահի առաջարկված երկխոսության տարբերակը առայժմ երկու կողմի համար էլ անընդունելի է մնում: Երկուսն էլ (փոխադարձաբար անհանդուրժողականություն ցուցաբերելով միմյանց պահանջների հանդեպ) չեն գիջում սեփական հավակնությունների դիրքերից: Քաղաքական զարգացումները Հայաստանում շարունակում են մնալ փակուղային վտանգավոր շրջագծում: Արձագանքելով նախորդ օրվա ՀՀ նախագահի հեռուստաելույթի այն հատվածին, երբ նախագահը խոսեց նոր ընդդիմության անհրաժեշտության մասին, Աժ փոխնախագահն ասաց. «Ընդդիմությունը եւ իշխանությունը մեկ օրգանիզմի տարբեր մասեր են: Որեւէ մեկի հիվանդությունն անմիջապես փոխանցվում է մյուսին: Այս առումով ես էլ եմ գտնում՝ շատ լավ կլիներ, որ մենք ունենայինք նոր որակներով ընդդիմություն եւ նոր որակներով իշխանություն»:

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԱՍՈՒԼԻՍ

Քաղաքական իրադարձությունները չպետք է տեղափոխվեն ոստիկանության հետ բախումների հարթություն

Դարձյալ երկխոսության անհրաժեշտության մասին

հասունության հետեւանք էր: Քաղաքական ուժերի փոխհարաբերությունները, շրջանցելով բանակցային տարբերակը, կտրուկ անցում կատարեցին դեպի ոստիկանության հետ բախումների հարթություն: Հայաստանի քաղաքական դաշտը լուրջ փորձություն է ապրում: Բայց ինչպես նախորդ օրը ՀՀ արտգործնախարարը, Տիգրան Թորոսյանը ասաց իրավիճակը ոչ ողբերգական, ոչ էլ ծայրահեղ լարված է համարում: Այնուամենայնիվ, նա ընդգծեց, որ եւ ընդդիմությունը, եւ իշխանությունները ամենից առաջ բարոյական կորուստներ ունեցան եւ դա երկկողմ անզգույշ քայլերի պատճառով:

«Ազգի» հարցին, թե նկատի առնելով հատկապես ԱՄՆ պետդեպարտամենտի մեղադրական արձագանքը ապրիլի 13-ին հանրահավաքի մասնակիցների դեմ կիրառված բռնությունների վերաբերյալ, կարելի՞ է ենթադրել դրսի ներկայության մասին նաեւ հայաստանյան իրադարձություններում, Տիգրան Թորոսյանը պատասխանեց. «Ես կարծում եմ, որ մենք իրավունք չունենք նման մեղադրանքներ ներկայացնե-

Ուրբաթ օրն ընդդիմությունը դարձյալ հանրահավաք է հրավիրել: Ի՞նչ են ձեռնարկելու իշխանությունները ապրիլի 13-ի նախադեպը չկրկնելու համար:

Աժ փոխնախագահը դարձյալ ընդգծեց բանակցային մեխանիզմի ստեղծման անհրաժեշտությունը խորհրդարանում ներկայացված քաղաքական ուժերի միջեւ: Դրան պետք է հասնել առավելագույն ջանքերի գործադրմամբ:

Երկխոսության առաջարկվող բանաձեւը հետեւյալն է. գոնե կարճ ժամանակով երկու բեւեռներն էլ պիտի ձեռնպահ մնան ինչ-ինչ գործողություններից: Հայաստանում չկա օրենք հանրահավաքներ, ցույցեր, երթեր անցկացնելու կարգի մասին, որի շրջանակներում հնարավոր լիներ քննարկել ոստիկանության եւ ընդդիմության գործողությունների օրինականության ասպեկտը: Օրենքի նախագիծն առաջին ընթերցմամբ արդեն անցել է Աժ-ում: Բայց դժվար թե ընդդիմությունը այնքան սպասի, մինչեւ օրենքը երկրորդ, երրորդ ընթերցմամբ անցնի (առավել եւս իրենց բացակայության պայմաններում) եւ նոր

տահության մթնոլորտի գրումը հասարակության միջից:

Այնուամենայնիվ, փոխնախագահի առաջարկված երկխոսության տարբերակը առայժմ երկու կողմի համար էլ անընդունելի է մնում: Երկուսն էլ (փոխադարձաբար անհանդուրժողականություն ցուցաբերելով միմյանց պահանջների հանդեպ) չեն գիջում սեփական հավակնությունների դիրքերից: Քաղաքական զարգացումները Հայաստանում շարունակում են մնալ փակուղային վտանգավոր շրջագծում: Արձագանքելով նախորդ օրվա ՀՀ նախագահի հեռուստաելույթի այն հատվածին, երբ նախագահը խոսեց նոր ընդդիմության անհրաժեշտության մասին, Աժ փոխնախագահն ասաց. «Ընդդիմությունը եւ իշխանությունը մեկ օրգանիզմի տարբեր մասեր են: Որեւէ մեկի հիվանդությունն անմիջապես փոխանցվում է մյուսին: Այս առումով ես էլ եմ գտնում՝ շատ լավ կլիներ, որ մենք ունենայինք նոր որակներով ընդդիմություն եւ նոր որակներով իշխանություն»:

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՏԵՍԱԿԵՏԵՐ

«Քրկարար է միայն առողջ ազգայնականությունը»

Հայ արիական միաբանության» առաջնորդ Արմեն Ավետիսյանը, «Հայդաս» կազմակերպության նախագահության անդամ Միխայել Պողոսյանը, «Նժդեհյան ցեղակրոն» կուսակցության նախագահ Գեւորգ Հովսեփյանը, «Հայրենիք-սփյուռք» միության նախագահ Գեւորգ Յազըճյանը եւ «Մաշտոց միավորում» կազմակերպության նախագահ Նուրիս Բեժանյանը հանդես են եկել հայտարարությամբ, որով հանրությանը կոչ են անում չենթարկվել իշխանությունների ու ընդդիմության սադրանքներին: Նրանց տեսակետով, իշխանափոխությունը չպետք է լինի ինքնանպատակ, այլ պետք է հաստատի ազգային արժեքային համակարգի գերակայություն, ազգային ախտահայացք ու կենսաձեւ, ինչն ընդունակ է անել միայն առողջ ազգայնական ուժը:

Ներկայիս ներքաղաքական ճգնաժամը նրանց կարծիքով համազգային ու համակարգային է, կազմակերպված հայությանը բընանի ուժերի կողմից: Հայոց արժեքային համակարգն, ըստ նրանց, խեղաթյուրված է, հասարակությանը պարտադրվում են ապազգային ու անբարո գաղափարներ ու կենսաձեւ, կեղծ ժողովրդավարության դրոշի տակ փորձ է արվում լուծելու նեղ խմբակային հարցեր:

Ստավրականները պատասխան են պահանջում

Հայ մտավորականության ֆորումի ավագանին դիմում է հղել համայն հայությանը, քաղաքական ու հասարակական կազմակերպություններին, երկրի ղեկավարությանը՝ իր բողոքն արտահայտելով իշխանությունների ձեռնարկած անօրինական հաշվեհարդարներից ու ծերբակալություններից: Դրանք, ըստ նրա, հետեւանք էին իշխանությունների միակողմանի գործողությունների եւ կոալիցիայի հակազդեցության բացակայության:

Ավագանու անդամները՝ Լենսեր Աղալովյանը, Օհան Դուրյանը, Սիլվա Կաղուտինյանը, Ռաֆայել Ղազարյանը, Սարգիս Մուրադյանը, Խորեն Պապյանը, Դավիթ Սեդրակյանը, Էդուարդ Սիմոնյանցը պահանջում են ազատ արձակել բոլոր ծերբակալվածներին, դադարեցնել քաղաքացիների բնակարանների խուզարկումը:

«Ֆորումի ավագանին օրերս քաղաքական ուժերի հետ պետք է փորձի ուղիներ գտնել ժողովրդին հասցրած խորը վիրավորանքը հաղթահարելու համար, կորոշի, թե ինչպես պետք է բացահայտվեն եւ պատժվեն ջարդարարները, մարդկանց բնակարանները ներխուժողները, կանանց եւ ծերերին մահակներով հարվածող հանցագործները:

Միայն այդ դեպքում է հնարավոր, որ մեր երկրում պատգամավորը դառնա պատգամավոր, նախարարը՝ նախարար, քաղաքական գործիչը՝ քաղաքական գործիչ, իրավապահը՝ իրավապահ եւ այս բոլորը ենթակա լինեն երկրի միակ տիրոջը, միակ իշխողին՝ ժողովրդին»:

Քաղաքական ճգնաժամը կվերանա շուտափույթ ընտրություններ անցկացնելով

«Ազգային միասնության ուխտ» կազմակերպության խորհուրդը հայտարարում է, որ երկրում առկա քաղաքական ճգնաժամի պատճառը կեղծված ընտրություններն են՝ հակամարտությունը վերացնելու պայմանը համարելով Ազգային ժողովի եւ նախագահի արտահերթ շուտափույթ ընտրությունները: Ընտրությունների արդարությունն ապահովելու համար, ըստ խորհրդի, անհրաժեշտ է քաղաքական բոլոր ուժերի եւ մտավորականության ներկայացուցիչների մասնակցությամբ ստեղծել Ազգային խորհուրդ եւ դրան ենթակա համախմբական ժամանակավոր կառավարություն:

Փալարերի երկու կողմերում

Բաղրամյան պողոտայում կատարված վերջին դեպքերը թուխպի նման ծանրացած են մայրաքաղաքի մթնոլորտի վրա: Բաց, թափանցիկ հասարակության փոխարեն կասկածամտության, վախի եւ ատելության զգացողություններով մթնոլորտ ու վիճակ ունենք այսօր: Հասարակության երկու թեւերն իրարից տարանջատող փալարային իրականությունը նախանշում է բռնատիրական մոայլ ժամանակներին բնորոշ վիճակ: 1996-ի դեպքերի հիշողությունները դեռ չխամրած նույն վայրում մեկ անգամ եւս բախվեցինք կարծրամիտ իշխանական պատնեշներին: Այդ օրերից ցայսօր Հայաստանում ժողովրդավարական, հումանիստական արժեքներն ասիճանական նահանջ են ապրում, եւ սրա նոր վկայությունը 2004-ի ապրիլի լույս 13-ի գիշերվա դեպքերն էին:

Ինչպես են մտածում այն անձինք, ովքեր բարիկադների մի կողմում կանգնեցրին անզեն, խաղաղ ցուցարարներին, մյուս կողմում՝ հատուկ պատժիչ ջոկատներին: Իշխանության տենչից էին ալեզել, թե՞ հայոց պետականության պահպանման բարձր գաղափարով համակվել: Այսօրվա մեր իրականությունը միայն դառը հեգնանք կարող է առաջացնել: Երկիրը պահելու ամուր բնազդը ժողովրդական մասսաների մենաշնորհն է միայն, իսկ ընտրյալ առաջնորդների գոյությունը (երբ լինում են) շնորհ է պարգեւաց:

Իշխանության եւ ընդդիմության պայքարը Աժ շենքի մոտ ծանոթ

պատկեր է՝ փոխադրված 1988-ից: Բայց այն ժամանակ հայ կոմունիստները ոչ փալար անցկացրին, ոչ էլ ջրցան մեքենաներ ու ռեհինե մահակներ գործադրեցին: Ռուս զինվորներն էին Անկախության հրապարակը շրջափակել, ընդ որում որեւէ բախում այդ օրերին չարձանագրվեց: Մեր նորանկախ երկրում հայ իշխանավորներն Ազգային ժողովի շենքի տարածքում արդեն երկրորդ անգամ սահմռկեցրին իրենց «ընտրող» բնակչության մի հատվածին:

Այսօր պարզվում է, որ երկու թեւերն էլ գիտեին կատարվելիք դեպքերի մասին, զարմանալի է. այդ պարագայում ում էր ձեռնտու այս իրավիճակը: Փալարերի մի կողմում հավաքված բազմությունը հոգեբանորեն միանգամայն անպատրաստ է եղել: Այդ մասին պատմում են հանրահավաքի մասնակիցները: Նրանցից մեկը այսպես է նկարագրում գիշերային մթնոլորտը. «Մարդիկ խաղաղ ու հանգիստ էին: Այստեղ տիրում էին ամենաջերմ հարաբերություններ, եւ հիշեցնում էր 1988-ի հրապարակը: Գյուղացիք իրենց հետ ուտելիք էին բերել, ընկույզ, միրգ ու բաժանում էին: Իրար օգնում ու հարցնում էին միմյանց կացության մասին, թե ով ինչի կարիք ունի: Մի մասը ընած էր կամ հաց էր ուտում: Հացը շատերի կոկորդին մնաց, երբ սկսվեցին ջրցան մեքենաների հոսդյունը, պայթուցիկների խլացուցիչ աղմուկը: Ժողովուրդը դիմադրում էր, չէր նահանջում, շատ էր շրջում, դրոշակների ու պաստառների փայտերով պաշտպանվում»: «Հետաքրքրական էր, շարունակում է մեկ ուրիշ ականատես, որ փալարերից այն կողմ գտնվող զինվորականների հետ բարիդրացիական հարաբերություններ էին սկսվել: Մարդիկ նրանցից ջուր էին խնդրում շշերով ու ասում էին, թե՝ մեր երեխաներն են, ինչ պիտի անեն»: Սակայն իրականում պարզվում է, որ այնքան էլ այդպես չէ: Պատմում են, որ զինվորների ճանկն այդ օրը բավականին շատ է եղել՝ Գյումրիից, Վանաձորից, Արմավիրից, մայրաքաղաքի Դավիթաշեն թաղամասից եւ այլ տեղերից հատուկ նշանակությամբ ջոկատներ են բերվել պաշտպանության համար: Սակայն նրանք բոլորը մեր հայրենակիցներն են, չէ, մեր հարազատները, դրացիները:

Արդյոք այդ տղաները թշնամական զգացումներ կարո՞ղ էին ունենալ հավաքվածների նկատմամբ: Ենթադրելի է, որ ոչ: Որովհետեւ նրանք աչքի առաջ պետք է որ ունեցած լինեն իրենց ընկերներին, հարազատներին, մտերիմներին: Նման պայմաններում ինչ կարող է պատահել ընդամենը մի քանի ամիս զինվորական հագուստ կրող երիտասարդի հետ, որն ապրել է այդ քաղաքում, այդ շրջակայքում: Ինչ պիտի անի նա, ներքուստ որեւէ զինվորական գործողության անպատրաստ, հոգեբանորեն դիմադարձ լինելով, երբ լսում է հրամանատարի անողոք ու հատու հարձակման անցնելու հրահանգը: Կարելի է պատկերացնել նրանց վիճակը, երբ պայքարում է երիտասարդ, դեռեւս չաղակալված խիղճը եւ իր զինվորական պարտքը, նաեւ վախը՝ դասալիքի սպառնալիքով: Նա սիրված է ձեռք բարձրացնել իր հայրենակցի վրա թթության մեջ չտարբերակելով կնոջը, տղամարդուն, երեխային: Այդ հայ հրամանատարի մեջ խոսե՞լ է այդ պահին խիղճը, թե սադիզմի ինչ օրինակ է տալիս երիտասարդին, որն ամիսներ անց պիտի վերադառնա նույն հասարակության մեջ արդեն աղճատված հոգեբանությամբ, թթած ունենալով ընտանիքի, ընկերության, բարեկամության վրա, որովհետեւ 18-19 տարեկանում նրան հրահանգվել է հարձակվել հարազատ ժողովրդի՝ իր քրոջ, ընկերուհու, մոր, տարեց եւ երիտասարդ մարդկանց վրա: Կյանքը մարդուն դնում է այնպիսի պայմաններում, որ ակնթարթորեն հրամանի ազդեցությամբ կարող է վերածվել մահակավոր կենդանու, որից հետո գլխիկոր պիտի շրջի քաղաքում մեղավորի ներքին բարդույթով: Այդ մասին չեն խոսում, չեն մտածում՝ անտեսելով երիտասարդ մարդու հոգեկան դրամա: Որովհետեւ ուզում են երկարաձգել «էս սարն իմն է, էն ծառն իմն է», ընչաքաղցության մոլուցքը:

Անընդունելի է, երբ մեկը հայ ժողովրդի ծոցից դուրս գալով՝ նման դաժանություն ցուցաբերի: Անհասկանալի այս կացությունը բացատրվում է միայն հրամանատարական հրահանգո՞վ, թե՞ մեկ այլ պատճառ ունի:

Մ. ԲԱՂԱԼՅԱՆ

ԱՆՁՈՒԳԱՇԵՌ ԶՈՒԳԱՇԵՌԱԿԱՆՆԵՐ

Նմանակելով հեղափոխություն չի լինում

Վրացական վարդերի փոխարեն հայկական մահակներ, ծեծուջարդ

«Իշխանափոխություն չի լինի, կլինի իշխանության այլասերում» խմբագրականում **«Ազգը»** մարտի 27-ին զգուշացրել էր. «Իշխանությունների կեցվածքի կարծությունը հուշում է, որ նրանք տեղի չեն տալու, հետեւաբար իշխանափոխություն իրրեւ այդպիսին տեղի չի ունենալու: Փոխարենը կլինեն ծեծ, ջարդ, արյուն, ծերբակալություններ, հալածանք, ազատությունների սահմանափակում, չինովնիկների առավել լկտիացում: Այլ խոսքով՝ իշխանությունները կշարունակեն իշխել փոխանակ կառավարելու, իսկ դա նշանակում է իշխանության քուլացում, ամբողջական այլասերում: Իսկ այլասերված իշխանություն մեզ պետք չէ: Մեր պարագայում դա պետականության տկարացում է, հղի նորանոր ու անվերջանալի փորձանքներով»:

«Ընդդիմության ղեկավարներին ծեծելու են» առաջնորդող հոդվածում **«Ազգը»** ապրիլի 2-ին, վկայակոչելով իշխանությունների մոտ կանգնած վստահելի աղբյուրների, գրել էր. «Մոտակա օրերին եւ շաբաթներին սպասվող ընդդիմության հանրահավաքները, որոնց նպատակն է տապալել Ռոբերտ Քոչարյանի իշխանությունը, դաժանաբար ճնշվելու են: Արդեն իսկ ուժային կառույցները ծեւավորել են մի քանի հոգանոց պատժիչ ջոկատներ, որոնց վրա խնդիր է դրված հանրահավաքին մասնակից ընդդիմության առաջնորդներին շուրջկալել եւ ժողովրդի առաջ մահակներով դաժանաբար ծեծել»:

Վերոնշյալ հրապարակումից երկու օր անց «Արդարություն» դաշինքի առաջնորդ Ստեփան Դեմիրճյանն «Իրավունք» թերթում հերքեց **«Ազգի»** հրապարակումը՝ ակնարկելով, թե դա իշխանությունների հերթական քարոզչությունն է: Մարտի 13-ի լույս գիշերը տեղի ունեցավ այն, ինչ կանխատեսել էինք՝ ծեծ, ջարդ, արյուն, ծերբակալություններ: Ընդդիմության մի շարք առաջնորդներ դաժանաբար ծեծվեցին հենց ժողովրդի առաջ, մի քանիսին հաջողվեց փախչելով փրկվել, խուսափել իշխանությունների բռնություններից: Այսինքն, տեղի ունեցավ այն, ինչը նախատեսել էին իշխանությունները, եւ որի մասին նախապես տեղեկացվել էր ընդդիմությունը:

Մարտի 9-ին ընդդիմությունը դուրս եկավ Ազատության հրապարակ եւ 10-15 հազար ցուցարարների հավաստիացրեց, որ իշխանությունից հեռացնելու է Ռոբերտ Քոչարյանին, «կոտրելու է դարաբաղյան կլանի ողնաշարը», «Հայաստանը պետք է ազատվի դարաբաղյան կլանի օկուպացիոն ռեժիմից»: Վիկտոր Դալլաքյանը հայտարարեց. «Գյուղը կանգնի, գերան կկոտրի: Մենք պետք է ջախջախենք խունտային: Ժողովուրդ, կանգնենք մինչեւ վերջ, մինչեւ Քոչարյանը հեռանա»: Արամ Զ. Սարգսյանը հորդորեց. «Մենք Ազատության հրապարակը չենք լքի, ամեն օր կլինի հանրահավաք: Սիրելի ժողովուրդ, սպասեք, կարող է մինչեւ հանրահավաքի վերջը Քոչարյանը հրաժարական տա»:

Հայաստանի ընդդիմությանն ակնհայտորեն ոգեւորել էր հարեւան Վրաստանի փորձը: Եթե 36-ամյա Միխայիլ Սաակաշվիլին կարողանում է փողոց դուրս բերել տասնյակ հազարավոր մարդկանց եւ ի վերջո տապալել էդուարդ Շեւարդնաձեի վարչակազմը, ապա ինչո՞ւ նույնը չի կարող անել Հայաստանի ընդդիմությունը: Ահա այսպիսին էր մեր ընդդիմության հաշվարկը: Վիկտոր Դալլաքյանը մի քանի անգամ հավաստիացրել էր, որ իրենք պատրաստ են եւ գծագրել են իշխանափոխության բոլոր սցենարները: Քոչարյանի վարչակարգը տապալելու առաջին փորձը ձախողվեց: Անշուշտ, սա բոլորին էլ չի նշանակում, թե նախագահի դիրքերն ամուր են: Պարզապես, որքան էլ զարմանալի եւ անհեթեթ թվա, մեր ընդդիմությունն ուղղակիորեն փորձում էր նմանակել վրացական այսպես կոչված «վարդյա» հեղափոխության փորձը եւ դա ներմուծել Հայաստան:

Մարտի 9-ին հանրահավաքում խմբված զանգվածը բոլորովին էլ հեղափոխական չէր. Ազատության հրապարակում հավաքվածների վրա անհնար էր խաղագումար դնել: Սաակաշվիլին հույսը դրել էր երիտասարդության վրա, մինչդեռ Հայաստանում ընդդիմությունը հավաքել էր հիմնականում միջին տարիքն անց, իշխանություններից դժգոհ մարդկանց: Այսինքն՝ խմբվել էր մի զանգված, որն ատում է իշխանություններին, բայց, մյուս կողմից, վստահություն չունի նույն ընդդիմության հանդեպ: Վրաստանում հեղափոխության նախերգանքը տրվեց դեռ փետրվարին, երբ սկսեց ծեւավորվել «Կմարա» (թարգմանաբար բավական է) երիտասարդական, ուսանողական շարժումը: Արդեն հեղափոխության օրերին կմարականների թիվն անցնում էր 3 հազարից: Ազատության հրապարակում հավաքվածների մեջ չնչին տոկոս էր կազմում ուսանողությունը:

Վրաստանում Սաակաշվիլին իշխանափոխության ամիսներին ընդգծված ծեւով առաջ չէր տանում սոցիալական հարցերը: Մեզ մոտ հակառակը՝ իշխանափոխության հիմքում դրել էին սոցիալական խնդիրները: Ըստ էության, բացի ժողովրդի սոցիալական ծանր վիճակի մասին թմբկահարելուց, Արտաշես Գեղամյանը եւ ընդդիմության մյուս առաջնորդներն այլ ասելիք չունեին ժողովրդին:

Վրաստանում ժողովրդի գերակշիռ մասը վստահում էր Սաակաշվիլուն: Մինչդեռ Հայաստանում ընդդիմությունը չի վայելում ժողովրդի վստահությունը եւ վարկաբեկվածության ռեյտինգով այնքան էլ չի զիջում իշխանություններին: Հայրենական ընդդիմությունը հաշվի չառավ, որ ի տարբերություն էդուարդ Շեւարդնաձեի, որը նախագահության տարիներին լավ թե վատ վերահսկում էր մայրաքաղաք Թբիլիսին ու շրջակա բնակավայրերը, Ռոբերտ Քոչարյանը ամբողջովին վերահսկում է Հայաստանը: Հաշվի չառնվեցին նաեւ Նինո Բուրջանաձեի եւ վրացական խորհրդարանի գործոնները: Փաստորեն, Վրաստանում Շեւարդնաձեն ուներ հզոր ընդդիմություն նաեւ ի դեմս խորհրդարանի եւ նրա նախագահ Բուրջանաձեի: Մեզ մոտ գործում է Ռոբերտ Քոչարյանին հլուհնազանդ, ոչ այնքան օրինական խորհրդարան, իսկ այդ խորհրդարանի նախագահ Արթուր Բաղդասարյանը Քոչարյանին ընդդիմադիր կլինի միայն այն դեպքում, եթե Հայաստանի նախագահի հրաժարականը դառնա անխուսափելի:

Եթե Միխայիլ Սաակաշվիլուն հաջողվեց, հակառակ արգելքներին, հիմնականում Արեւմտյան Վրաստանից մայրաքաղաք Թբիլիսի հասցնել տասնյակ հազարավոր մարդկանց, ապա ինչո՞վ էին վատ Արտաշես Գեղամյանը, Ստեփան Դեմիրճյանը կամ մյուս առաջնորդները: Ի՞նչ է, մեր ընդդիմության երեւելի առաջնորդները մեկ Սաակաշվիլի չարժե՞ն եւ չեն կարող Մեղրիից, Գյումրիից կամ Վարդենիսից մի քանի տասնյակ հազար մարդ հասցնել Բաղրամյան պողոտա: Սակայն ոչ ոք չփորձեց վերլուծել, թե ինչու Սաակաշվիլին իշխանափոխությունն սկսեց Արեւմտյան Վրաստանից, այլ ոչ թե, ասենք, Կախեթից: Սաակաշվիլին պատահաբար չէր ընտրել Զուգդիդի քաղաքը եւ Մեգրելիան: Հենց այս քաղաքում եւ այս շրջանում էր կենտրոնացած Շեւարդնաձեից դժգոհ բնակչությունը, որը չէր կարողանում ներել ազգությամբ մեգրել, Վրաստանի առաջին նախագահ Զվիադ Գամսախուրդիայի տապալումն ու սպանությունը, որը, նրանց համոզմամբ, իրականացվել էր հենց Շեւարդնաձեի ձեռքով:

Տողերիս հեղինակը մոտ մեկ տարի հենց Վրաստանում հետեւել է «վարդյա» հեղափոխությանը եւ կարող է շարունակել զուգահեռներ անցկացնելը՝ ցույց տալու, որ իշխանափոխության այն տարբերակը, որն իրականացվեց հարեւան հանրապետությունում, անհնար է կյանքի կոչել Հայաստանում:

ԹԱԼԱՌԻ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Սլովակիայում Բրիտանիայի դեսպանը միանում է աղմկահարույց վեճին

Հայաստանում Բրիտանիայի դեսպանի նվաստացուցիչ արտահայտություններից հետո առաջին անգամ մեկ ուրիշ երկրի Բրիտանիայի դեսպանը միանում է աղմկահարույց վեճին: Այդ հարցի շուրջ Սլովակիայի հայկական համայնքի նախագահ Ատոմ Գրիգորյանի նամակին պատասխանելով, Սլովակիայում Բրիտանիայի դեսպան Ոիկ Թոդն ապրիլի 5-ին գրել է, թե ցավում է, որ «1915-16-ի դեպքերի» առնչությամբ բրիտանական կառավարության դիրքորոշումն անձնական խնդիրներ է առաջացրել նամակագրի համար: Դեսպանը նրան վստահեցրել է. «Ինչ որ տեղի է ունեցել, չի մոռացվելու»:

Դեսպան Թոդի նամակը նույնքան վիրավորական է, որքան Հայաստանում Բրիտանիայի դեսպանի դիրքորոշումը: Ուստի նրան էլ բողոքի նամակներ պետք է ուղարկել հետեւյալ հասցեով. bebra.internet.sk:

Մյուս կողմից՝ Թորդա Էբբոթ-Ուոթը շարունակում է բողոքի նամակներ ստանալ աշխարհի տարբեր անկյուններից: Հայկական երկու հզոր կազմակերպություններ անցյալ շաբաթ իրենց ձայնն են բարձրացրել այդ առնչությամբ: Առաջինը Ֆրանսիայի Ռամկավար ազատական կուսակցությունն է, որը հայտարարությամբ հանդես է եկել կազմակերպության օրգան «La lettre de L'ADL» («ՌԱԿ-ի տեղեկատու») պարբերականում՝ դատապարտելով դեսպանի արտահայտությունները եւ Հայաստանի կառավարությունից պահանջելով դեսպանին «անցանկալի անձ» (Persona non grata) ճանաչել:

Երկրորդը Մեծ Բրիտանիայի «Հայ համայնքի եւ եկեղեցու խորհուրդն» (ՀՀԵԽ) է, որը վարչապետ Թոնի Բլերին է դիմել պահանջելով, որ դեսպան Էբբոթ-Ուոթը «շատ եւ անվերապահորեն հետ վերցնի իր վիրավորական նկատառումները, որոնք միաժամանակ ոչ դիվանագիտական են եւ անհարիր (Բրիտանիայի) նորին մեծության կառավարության դեսպանին»:

Հետաքրքրական է, որ ապրիլի 24-ի նախօրյակին այս շաբաթ Թուրքիա է այցելում «Բրիտանա-թուրքական միջխորհրդարանական բարեկամության խմբակցությունը», որտեղ Ա-թաթուրքի դամբարանն այցելելուց բացի բրիտանացի խորհրդարանականները հանդիպելու են թուրք պաշտոնական անձանց, այդ թվում նաեւ արտգործնախարար Աբդուլլահ Գյուլի հետ:

ՎԱՐՈՒԺԱՆ ՍԱՍՈՒՆՅԱՆ
«Դալլիֆոռնիա կուրիեր»

Թուրք նախարարը ջնջում է իր այցելությունը Միշիգան

Թուրքիայի կրթության նախարար Հուսեյն Չելիքը ծրագրում էր այս շաբաթ այցելել տարբեր համալսարաններ Իլինոյսում, Վիսկոնսինում, Միշիգանում, Օհայոյում եւ Նյու Յորքում: Բայց երբ Թուրքիայի արտգործնախարարությունը տեղեկացավ նրա շրջագայության ծրագրին, խորհուրդ տվեց նրան ջնջել իր այցելությունը Միշիգանի «Էն Արբոր» համալսարան, որտեղ նրան ընդունելու էր սոցիոլոգիայի պրոֆեսորի օգնական Ֆաթմա Գոչեկը: Վերջինիս համոզմամբ, արտգործնախարարությունը կրթության նախարարին տեղեկացրել է, որ «ինքը (Գոչեկը) ճանաչում է Հայոց ցեղասպանության պնդումները, իլուստրել է նախկինում Թանսու Սիչամին (որը նույնպես ճանաչում է Հայոց ցեղասպանությունը) եւ այժմ էլ մի գիրք է գրում այդ հարցի շուրջ»:

Ավելացնենք, որ պրոֆ. Գրիգոր Սյունու հետ պրոֆ. Գոչեկն աշխատանքային սեմինար է կազմակերպել վերջին չորս տարում Հայոց ցեղասպանության թեմային նվիրված, մեկը Չիկագոյի, իսկ մյուսը Միշիգանի համալսարանում:

Այս միջադեպը մի անգամ եւս հաստատում է, որ հայ-թուրքական հարաբերությունների բարելավման վերաբերյալ Թուրքիայի վարչապետ Ռեջեպ Էրդողանի շարունակ կրկնվող խոստումներն առնվազն լուրջ չեն: Եվրամիությանն անդամակցելու պահանջները բավարարելու ոգի ներքո Էրդողանի կառավարությունը մի շարք «բարենորոգումներ» է անցկացրել, որոնք ցարդ մնացել են թղթի վրա: Ավելին, հակառակ քանիցս կատարված վստահեցումներին, Թուրքիան ոչ մի քայլ չի ձեռնարկել դիվանագիտական հարաբերություններ հաստատելու Հայաստանի հետ: Ինչպե՞ս կարող է Էրդողանի կառավարությանը համոզել որեւէ մեկին, թե լրջորեն մտահոգված է բարելավելու հարաբերությունները Հայաստանի հետ, երբ չի հանդուրժում Թուրքիայի կողմից հայկական թեմաներով համագումարների անցկացումն ամերիկյան համալսարանում:

Զարմանալիորեն մինչ Էրդողանի կառավարությունն օտարում է հիշյալ թուրք պրոֆեսորին, Միշիգանի համալսարանը նրան (Ֆաթմա Գոչեկին) պարգեւատրում է Հարոլդ Զոնսոնի անվան մրցանակով՝ թուրք եւ հայ գիտնականների կառուցողական երկխոսություն ծավալելու նրա «նորարարական ջանքերի եւ համալսարանի տարածքում բազմակարծության ոգուն խթանմանը նպաստելու» համար:

Հ. Ս.

ԵՂԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Խնդրում ենք ուղղում մտցնել

Դիմում ՀՀ Ազգային ժողովին

2004 թ. ապրիլի 8-9-ին **«Ազգ»**, «Գոլոս Արմենիի», «Գրական թերթ», «Երկիր», «Հայաստանի Հանրապետություն», «Հայոց աշխարհ» եւ «Ռեսպուբլիկա Արմենիա»* թերթերը հրապարակեցին գրող, հրապարակագիր Զորի Բալայանի «1915-ը Հայոց ցեղասպանության 30 տարիներից մեկն է» հոդվածը: Հեղինակը հարուցում է հրատապ մի հարց. այսօր ոչ միայն Թուրքիան, այլեւ համաշխարհային հասարակայնության մեծ մասը 1915 թվականի ապրիլի 24-ը ընդունում է ոչ թե հայ ժողովրդի հիշողության եւ վշտի ընդհանրացված ու խորհրդանշական օր, այլ որպես ժամանակի կոնկրետ ու միակ հատված, երբ թուրքերը առաջին աշխարհամարտի թեժ պահին, իբր, հարկադրված են եղել ընդամենը «հայկական տարրը» տեղափոխել երկրի խորքերը, հեռացնել ռազմական գործողությունների թատերաբեմից: Այստեղից էլ՝ «պատերազմը մնում է պատերազմ» հայտնի բանաձեւի հաճախակի կրկնությունը, որն, իբր, արդարացնում է ամեն մի դաժանություն:

Մինչդեռ պատմությանը եւ մեր հիշողությանը քաջ հայտնի է, որ հայերի ցեղասպանությունը շարունակվել է երեսուն տարի անընդմեջ, սկսած 1893-ից մինչեւ 1923-ը: Համաձայն անհերքելի փաստերի ու պատշաճական փաստաթղթերի՝ խոսքը վերաբերում է այն երեսուն տարիներին, երբ Թուրքիան պետական մակարդակով բացեիբաց կազմակերպում եւ իրագործում էր հանցագործություն ընդդեմ մարդկության: Չնայած այդ իրողությանը, մենք ինքներս հաճախ ցեղասպանության տարիների ամբողջական շարքն ակամա նույնացնում ենք 1915 թվականի միայն մեկ օրվա հետ: Եվ հարկ չկա զարմանալու, որ տարբեր երկրներում պետական ու հասարակական գործիչները, ավանդաբար գտնվելով ընդունված դոգմայի ազդեցության տակ, մերժում են Մեծ եղեռնը ճանաչել որպես ցեղասպանություն: Նման դիրքորոշումը թելադրվում է բացառապես նրանով, որ ինքնակոչ փաստաթղթերում (այդ թվում նաեւ Հայաստանից ներկայացված) ամեն անգամ հիշատակվում է միայն մեկ տարեթիվ, որը համընկնում է Առաջին համաշխարհային պատերազմի բուռն ժամանակահատվածին:

1988 թվականի նոյեմբերի 22-ին Հայաստանի Գերագույն խորհուրդը օրենք ընդունեց Օսմանյան Թուրքիայում 1915 թվականի Հայոց ցեղասպանությունը դատապարտելու մասին: Մեզ համար այն ժամանակ կարեւոր էր նման օրենքի ընդունման փաստը: Հիմա ժամանակներն այլ են: Եվ տարեցտարի ակնհայտ է դառնում, որ գործող օրենքը սողանցքներ է թողնում Թուրքիայի եւ նրա հանցակիցների արդարացման համար, որոնք շահարկում են այսպես կոչված պատերազմական ժամանակների յուրահատկությունները: Կասկած չկա, որ վաղուց արդեն հիրավի հույժ անհրաժեշտություն է դարձել այդ օրենքի փոփոխությունը:

Հատկապես այդ պատճառով, հրապարակելով «1915-ը Հայոց ցեղասպանության 30 տարիներից մեկն է» հոդվածը, մենք վերոհիշյալ պարբերականների խմբագիրներս, լինելով ձեր ընտրողները եւ հանդես գալով բազմահազար ընթերցողների անունից, որոնք նույնպես ընտրող են, դիմում ենք Ազգային ժողովին՝ առաջարկելով փոփոխություններ մտցնել 1988 թվականի նոյեմբերի 22-ի գործող օրենքի մեջ: Ազգային ժողովի պատգամավորների ուշադրությունը հրավիրում ենք մեր հեղինակի հոդվածում նշված օրենքի անվանման նոր խմբագրության վրա. «Օրենք Օսմանյան կայսրությունում եւ Արեւելյան Հայաստանում 1893-1923 թվականների Հայոց ցեղասպանության դատապարտման մասին»:

Հարգանքներով՝

ՏԱԿՈՒՀԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ
«ԱԶԳ»

ՖԼՈՐԱ ՆԱՖՇԵՐՅԱՆ
«ԳՈԼՈՍ ԱՐՄԵՆԻԻ»

ՆՈՐԱՅՐ ԱՊԱԼՅԱՆ
«ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ»

ԱՊԱՐՏԱԿ ՍԵՅՐԱՆՅԱՆ
«ԵՐԿԻՐ»

ՏԻԳՐԱՆ ՓԱՓԱՆՅԱՆ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»

ԳԱԳԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ
«ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ»

ՎԱՐԴԱՆ ԱԼՈՅԱՆ
«ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱ ԱՐՄԵՆԻԱ»

* Թվարկումը այբբենական կարգով:

«Ուղղ սթրիթ ջոռնալն» ԱՄՆ կառավարությանը խորհուրդ է տալիս «ժողովրդավարացնել» Հայաստանը

«Ուղղ սթրիթ ջոռնալն» ամերիկյան խոշորագույն երեք օրաթերթերից է. մոտ է ԱՄՆ կառավարությունը. հաճախ արտահայտում է ոչ պատշաճական Վաշինգտոնի տեսակետները: Մարտի 14-ի համարում «Նոր վերելք Կովկասում» հրապարակման մեջ թերթը վերլուծելով Հայաստանի ներքաղաքական զարգացումները. ԱՄՆ կառավարությանը խորհուրդ է տալիս ժողովրդավարացնել Հայաստանը: Հոդվածի հեղինակը հայ հասարակությանը քաջածանոթ Դեյվիդ Ֆիլիպսն է. որը շատ մոտ է ԱՄՆ պետքարտուղարությանը. կատարում է վերջինիս հրահանգները: Ֆիլիպսը «Թուրք հայկական հաշտեցման հանձնաժողովի» ստեղծման ակունքներում է կանգնած. ուստայաց է եւ ընդգծված թուրքամետ: Նա օրերս Երեւանում էր գտնվում:

«Ոգեւորված վրացական «վարդերի» հեղափոխությամբ. հայերը նույնպես պահանջում են վարչակարգի փոփոխություն: Վերջին օրերին Երեւանի Ազատության հրապարակում տեղի են ունենում բազմահազար խաղաղ ժողովրդավարական ցույցեր: Կառավարությունը ձերբակալել է հարյուրավոր մարդկանց եւ սպառնում է բռնություններ կիրառել. եթե ցուցարարները շարժվեն դեպի նախագահական պալատ: Արյունահեղությունից խուսափելու համար անհրաժեշտ է անցկացնել հանրաքվե միջազգային դիտորդների վերահսկողությամբ եւ պարզել ցանկանո՞ւմ է ժողովրդի մեծամասնությունը Ռոբերտ Քոչարյանի հրաժարականը». գրում է Ֆիլիպսը:

«Հայերը ճգնաժամի մեջ են այն ժամանակից ի վեր. երբ Քոչարյանը 1996 թ. իշխանությունից զրկեց նախկին նախագահ Տեր-Պետրոսյանին: Քոչարյանի համար վաստակաբերը 1999 թ. հոկտեմբերի 27-ն էր. երբ զինված մարդիկ խուժեցին Ազգային ժողովի շենք. սպանեցին վարչապետին եւ խորհրդարանի նախագահին». գրում է նա:

Ակնհայտորեն Ֆիլիպսը թույլ է տալիս սխալներ: Նախ Տեր-Պետրոսյանը հրաժարական է տվել 1998 թ.. նրան իշխանությունից հեռացրել է ոչ թե Ռոբերտ Քոչարյանը. այլ Վազգեն Սարգսյանը: Բացի այդ. Հայաստանի ճգնաժամը չի սկսում Քոչարյանի իշխանության գալով: Հակառակը Քոչարյանի իշխանությանը գալով Հայաստանում տնտեսության մեջ նկատվում է լուրջ առաջընթաց: Այս ամենն. իհարկե. Ֆիլիպսը չի կարող տեսնել. քանի որ նրա նպատակն է Հայաստանը հնարավորինս ներկայացնել անելանելի վիճակում:

Անդրադառնալով դարաբաղյան հակամարտությանը. Ֆիլիպսը գրում է. որ այս «եղբայրասպան պատերազմում» սպանվեցին տասնյակ հազարավոր մարդիկ. 1 միլիոն ադրբեջանցիներ դուրս քշվեցին սեփական տներից: «Արյունահեղությունը դադարեցվեց այն բանից հետո. երբ 1993 թ. միջազգային միջնորդները հասան կրակի դադարեցմանը». գրում է նա: Կամ թե ակամա. Ֆիլիպսը յուրահատուկ գրած պարբերության մեջ թույլ է տալիս առնվազն 3-4 սխալ: Մասնավորապես. շեշտելով 1 մլն ադրբեջանցի փախստականների չափազանցված լուրը. Ֆիլիպսը բառ անգամ չի ասում ավելի քան 400 հազար հայ փախստականների մասին. մեկ տարով առաջ է բերում դարաբաղյան ճակատում զինադադար հաստատելու տարին. փոխանակ նշելու. որ կրակը դադարեցվեց Ռուսաստանի ջանքերով. նշում է ինչ-ինչ միջազգային միջնորդների անուններ:

«Հայերը Ադրբեջանի դեմ պատերազմի համար բանկ վճարեցին: Ի համաչափություն իրենց էթնիկ եղբայրների. Թուրքիան շրջափակեց Հայաստանը: Հայաստանի աղքատությունն ու մեկուսացվածությունը մեծ մասամբ պայմանավորված են Թուրքիայի հետ սահմանի փակ լինելով». գրում է Ֆիլիպսը եւ ԱՄՆ կառավարությանը խորհուրդ տալիս. իհարկե. ոչ բառացի տաղալել Ռոբերտ Քոչարյանի վարչակարգը:

«Արեւմտյան Եվրոպայում եւ նախկին խորհրդային հանրապետություններում լինելով բարեփոխումների հետեւողական աջակիցը. ԱՄՆ-ը պետք է օգնի Հայաստանին իրագործելու ժողովրդավարությանն անցնելու հերթական դժվար փուլը: Բուշի վարչակարգը Հայաստանի վրա ունի ուժեղ ազդեցություն: Հասկացնելով. որ նա (Վաշինգտոնը) չի հանդուրժի Երեւանի Ազատության հրապարակում ցուցարարների նկատմամբ բռնությունները. Վաշինգտոնը կարող է օգնել կառավարության եւ ընդդիմության միջեւ համաձայնության հասնելուն 3 ամսվա ընթացքում հանրաքվե անցկացնելու մասին». գրում է Ֆիլիպսը:

Ուշագրավ է հրապարակման վերջին պարբերությունը. «Հայաստանի ժողովրդավարական առաջընթացը կարող է օժանդակել դարաբաղյան խաղաղ բանակցությունների վերսկսմանը. սիրել Անկարային բացել Հայաստանի հետ սահմանը եւ թուլացնել Ռուսաստանի եւ Իրանի ազդեցությունը Հարավային Կովկասում: Դա Հայաստանի ժողովրդին հնարավորություն կտա նայելու առաջ եւ կառուցելու ավելի պայծառ ապագա»:

«ՏԱՔ» ԿԵՏԵՐ

Բեն Լադենը «հաշտվում է» Եվրոպայի հետ եւ սպառնում ԱՄՆ-ին ու Իսրայելին

Դուբայի «Ալ Արաբիա» հեռուստալիսով երեկ առավոտյան տարածվել է «Ալ Ղահդա» միջազգային ահաբեկչական ցանցի առաջնորդ Ուսամա բեն Լադենի նոր ելույթի ձայնագրությունը: Նույն ձայներիզը հիշ ավելի ուշ տարածել է Քաթարի «Ալ Ջազիրա» արբանյակային հեռուստաընկերությունը: Թրանսպորտը նշում է. որ ձայներիզի իսկությունը ներկայումս ստուգվում է:

Իր ելույթում Ուսամա բեն Լադենը «հաշտություն» է առաջարկում Եվրոպական այն երկրներին. որոնք կպարտավորվեն չհարձակվել մահմեդականների վրա: Միաժամանակ նշվում է. որ ԱՄՆ-ի հետ «զինադադար չի լինելու»: Չայնագրության մեջ ընդգծվում է. որ Մադրիդում մարտի 11-ին 200 կյանք խլած ահաբեկչություններն «Ալ Ղահդայի» վրեժն էին Եվրոպացիներից Իրաքի եւ Աֆղանստանի ռազմական գործողություններին նրանց մասնակցության համար: Սակայն Թրանսպորտը նշում է. որ հաշտության առաջարկը փոխ-ինչ երկիմաստ է. քանզի բառացիորեն ասվում է հետեւյալը. «Հաշտության առաջարկն ուժի մեջ է այս ուղերձի հրապարակմանը հաջորդող 3 ամիսների ընթացքում»:

Միաժամանակ «Ալ Ղահդայի» առաջնորդը սպառնում է Իսրայելից վրեժ լուծել պաղեստինյան «Համաս» արմատական խմբավորման հոգեւոր առաջնորդ շեյխ Ահմեդ Յասինի սպանության համար:

Բեն Լադենն իր ելույթում մահմեդականներին հորդորում է շարունակել պայքարն Իրաքի ներխուժած ամերիկացիների դեմ: Խոսվում է նաեւ անչափ կարեւոր համարվող իսրայելա-պաղեստինյան հակամարտության մասին: «Գլխավոր խնդիրը Պաղեստինի օկուպացումն է». ընդգծվում է ելույթում: «Իրաքի պատերազմի կապակցությամբ ամերիկյան ընկերությունները միլիարդավոր դոլարներ են շահում ինչպես զենքի արտադրության. այնպես էլ Իրաքի վերականգնման աշխատանքների շնորհիվ». ավելացնում է բեն Լադենը:

Իրաքցի շիա ապստամբների առաջնորդը պատրաստ է իր ջոկատները վերածելու սոցիալ-քաղաքական շարժման

Շիա իրաքցիների արմատական առաջնորդ Մոքթադա ալ Սադրը պատրաստակամություն է հայտնել իր զինյալ ջոկատները վերածելու սոցիալ-քաղաքական շարժման եւ ներկայանալու իրաքյան կրոնական դատարան: Բայց դա կարող է տեղի ունենալ միայն Իրաքում. «օրինական ու ժողովրդավարական» կառավարության ստեղծումից հետո: Այդ մասին Թրանսպորտի թղթակցին հայտարարել է ալ Սադրի ներկայացուցիչ Հայդար Ալիզը:

Ապստամբ առաջնորդի մեկ ուրիշ ներկայացուցիչ «Շոթիգել» հանդեսին ասել է. թե ալ Սադրը «համաձայն է կատարել կրոնական հեղինակությունների եւ առաջին հերթին մեծ այաթոլլա Ալի ալ Սիստանիի որոշումները»: Հաղորդվում է. որ շիա ապստամբների առաջնորդը կոալիցիոն զորքերին որոշ զիջումներ անելու մտադրության մասին հայտարարել է մի քանի օր տեւած խորհրդակցություններից հետո. որոնց մասնակցել է մասնավորապես այաթոլլայի որդին:

Իր իսկ խոսքերով. ալ Սադրը զիջումներ է անում. որպեսզի «օկուպացիոն ուժերին հնարավորություն չտա սրելու ճգնաժամը եւ շարունակելու արյունահեղությունը»: Ավելի վաղ նա համաձայնել էր ամերիկացիների հետ բանակցել առանց նախապայմանի: Չնայած դրան. կոալիցիոն ուժերն ամրապնդում են իրենց դիրքերը Նեջեֆի շրջանում. որտեղ ենթադրաբար թաքնվում է ալ Սադրը: Պիտորդները չեն բացառում. որ ամերիկացիները շուտով հարձակում սկսեն քաղաքի վրա:



Չնայած պատանդի սպանությանը, իտալական զորքը կմնա Իրաքում

Իտալիայի արտգործնախարար Ֆրանկո Ֆրաստինին հաստատել է Իրաքում պատանդ վերցված 4 իտալացիներից մեկի սպանության լուրը: Ավելի վաղ՝ չորեքշաբթի օր. Քաթարի «Ալ Ջազիրա» հեռուստաընկերությունը տարածել էր իրաքյան «Կանաչ բրիգադ» խմբավորման հայտարարությունը. որտեղ խոսվում էր պատանդներից մեկի սպանության մասին:

«Ալ Ջազիրայի» ղեկավարներից մեկն իտալական «Լա Սեստե» հեռուստալիսով հայտարարել է. որ իր տրամադրության տակ է իտալացի պատանդի սպանությունը պատկերող տեսաերիզը: Թրանսպորտը հաղորդում է. որ իտալացի 4 պատանդներից մեկը՝ 36-ամյա նախկին զինծառայող Ֆաբրիցիո Կուատրոկին. մահապատժի է ենթարկվել ծոծրակին արձակված կրակոցից:

«Կանաչ բրիգադը» սպառնացել է սպանել նաեւ մյուս 3 իտալացիներին. «եթե իտալական զորքերն Իրաքից դուրս չբերվեն ըստ կոնկրետ ժամանակացույցի»:

Երեկ Իտալիայի վարչապետ Սիլվիո Բերլուսկոնին իր հեռուստելույթում հայտարարել է. թե իտալացի պատանդի սպանությունը չի ազդի «խաղաղարար առաքելության ընթացքի վրա»: Նրա խոսքերով. իտալական զորքերն Իրաքից չեն հեռանա. անկախ որեւէ բանից: «Ահաբեկիչները ոչնչացրին մեկ կյանք. բայց նրանք չեն ոչնչացնի մեր արժեքները եւ խաղաղության մեր ձգտումը»». ասել է վարչապետը:

Ամերիկյան զինվորական հրամանատարության տվյալներով. ներկայումս իրաքցի պարտիզանները պատանդ են պահում 40 օտարերկրացիների: Ըստ Թրանսպորտի. նրանք 12 պետությունների քաղաքացիներ են: Ըստ պատշաճաբար չհաստատված տեղեկությունների. իրաքցի ապստամբները երեկ պատանդ են վերցրել եւս 2 ճապոնացիների:

Կիպրական բանակցությունների ներքին ծալքերը

«Ասոշիեյթեդ պրես» գործակալությունը Կիպրոսից տեղեկացնում է. որ երկկողմ բանակցությունների ընթացքում կղզու հունական եւ թուրքական համայնքների ներկայացուցիչները կենտրոնացել են տնտեսական հարցերի վրա:

Ըստ վերոհիշյալ լուրը հաղորդող «Թեհրան թայմսի»». Ֆինանսների նախարարությունը կարող է հանձնվել հունական կողմին. իսկ էկոնոմիկայի նախարարությունը՝ թուրքականին: «Այս հարցում կան որոշ դժվարություններ»». ասել է Հյուսիսային Կիպրոսի գրավյալ տարածքի վարչապետ Թալաթը. ավելացնելով. «հունական կողմը ցանկանում է իր ձեռքում պահել մի քանի կարեւոր կառույցներ. ինչպես. օրինակ. կենտրոնական բանկը. մինչդեռ թուրքական կողմը կառույցների հավասար բաժանման հարցն է դնում»: Առաջարկվում է. որ ցանկացած իշխանական մարմնի փոխնախարարները լինեն այն կողմից. որը չի ղեկավարում նախարարությունը:

Քննարկման լուրջ հարցերից են նաեւ հողի վերաբաշխումը. քաղաքացիների ազատ տեղափոխումը մի մասից մյուսը. եւ վերաբնակեցումների արժեքը: Մինչ թուրքական կողմը 3.8 միլիարդ դոլար է գնահատում այդ գործընթացը. հունական կողմը 5 միլիարդ դոլար է պահանջում: Այս մասին բարեգործական մի համագումար է սկսել իր գործունեությունը Բրյուսելում ապրիլի 15-ին: Դրան մասնակցում են Համաշխարհային բանկը. Միջազգային արժութային հիմնադրամը. Եվրամիության անդամ երկրները եւ Մ. Նահանգները:

Լուկաշենկոն Բելառուսն այլեւս չի համարում Ռուսաստանի պարտաղանը

Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն երկրի խորհրդարանում ելույթ ունենալուց հետո հայտարարել է. թե Բելառուսն այլեւս չի կարելի Ռուսաստանի պարտաղան համարել: Նրա խոսքերով. Բելառուսը Ռուսաստանին պարտք է ընդամենը 70 մլն դոլար: Նախագահը խոստացել է այդ «միակ պարտքը» մարել 3 տարում:

Բացի դրանից. Լուկաշենկոն ասել է. որ պատրաստ է 2006 թ. նախագահական ընտրություններում իր թեկնածությունը դնել 3-րդ անգամ. եթե իրեն «պատշաճի ժողովուրդը». նա խոստացել է գործել «բացահայտորեն. ազնվորեն եւ ըստ սահմանադրության». առանց «քաղաքական խաղերի»:

Նախագահն ընդգծել է. որ ընտրություններից առաջ ինքը չի գործի իր քաղաքական ընդդիմախոսներին հակառակ: Ոյթեր գործակալությունը մեջբերում է նրա հետեւյալ խոսքերը. «Գլխավոր հարցը ոչ թե այն է. որ Լուկաշենկոն մնա իշխանության գլուխ. այլ որ ինձ չհանդիմանեն իշխանությունը լքելու համար»:

Լուկաշենկոն նաեւ հայտարարել է. որ Բելառուսը պատրաստ է սեփական իրավասությունների մի մասը փոխանցել միասնական տնտեսական տարածքի գործունեությունն ապահովող կառույցին:

Բուխարեստում խանդում են կոմունիստ հերոսների դամբարանը

Բուխարեստում սկսել են քանդել կոմունիստ հերոսների դամբարանը: ՈՒԱ գործակալությունը հաղորդում է. որ դրա տեղում կառուցվելու է ուղղափառների մայր տաճար:

Մինչեւ անցյալ շաբաթ դամբարանը համարվում էր պետության կողմից պահպանվող մշակույթի հուշարձան: Այնտեղ թաղված կոմունիստ ղեկավարների աճյունները դուրս բերվելով վերաթաղվել էին 1989 թ. ժողովրդավարական վերափոխումներից հետո:

Դամբարանի քանդման հակառակորդները վերջին շաբաթներին կազմակերպել էին բողոքի մի շարք ձեռնարկումներ: Քննադատվել էր նաեւ եկեղեցի կառուցելու ծրագիրը. որին դեմ էր Բուխարեստի քաղաքապետը: Բայց երկրի կառավարությունը պատշաճեց տվյալ ծրագիրը:

Մշակույթ

«Ողորմած տասի սարի ամբուլը»

Կամ սկսնակ ոտանավորչու «Նեյնիմե» զառանցանքը...

«Գրական թերթում» (19.12.03) տպվել էր ոմն Խաչիկ Մանուկյանի (պարզվում է՝ ոտանավորչու) զառանցանքը՝ «Ակադեմիական սրհիպտիզը» «հոդվածը», որտեղ կաս-կարմիր կտրած, բազարի լուսանկներ է թափում հայտնի գրականագետ, ակադեմիկոս Սեւակ Արզումանյանի հասցեին՝ հաշիվ պահանջելով նրանից. ո՞նց է համարձակվել դրվատանքի խոսք ասել իմ վերջին ժողովածուի «Հուդայի արձակուրդը» գրքի մասին, որն այս տարի արժանացել է պետական մրցանակի: Ս. Արզումանյանի հոդվածն այնպես է մթագնել խեղճի ուղեղը, որ մեր լավագույն ֆենադասներից մեկին դիմում է այսպիսի լկտի տոնով. «Չեմ կարծում, թե ֆո տարիքի մարդը կարող է խիղճը կորցնել, բայց ուղեղի մթագնումներ, ցավոք, լինում են...»: Եվ երբ կարդում էի հոդվածը, որտեղ նա Ս. Արզումանյանին եւ ինձ ճաշակի ու պոեզիայի իր «չափանիշներով» «գնահատման» դասեր է տալիս, հանկարծ հիշեցի՝ շաբաթներ առաջ, նույն «Գրական թերթում» (28.11.03) նա ընդարձակ «շարք» էր տպել, որը տպավորվեց անհեթեթ հանգերով եւ աշուղական «շուտասելուկներով»: Չարժեր անդրադառնալ այդ ցածրորակ հորինվածքներին, բայց երբ աղաշնորհ մեկը վաստակաշատ ֆենադասին փորձում է իր նեյնիմ-մեյնիմի հանգույն «դասեր» տալ, մեջս ցանկություն առաջացավ տեսնել, թե այս տափակաբանի չափածո՞ն ինչպիսին է: Ահա, նրա «բանաստեղծական» գոհարներից մի քանիսը.

Սկզբում օրի, վերջում գարեջուր-
/պաստիրաններից սա է մնացել:
/Չոչ է անում իմ երկիրը պուճուր,
/Չոչ է անում իմ հայրենիքը ծեր...

Այսինքն, խեղճ «հայրենիքը» այնքան է խմել, որ սկիզբում «չոչ» է անում, անում է այն, ինչ անում է ոտանավորչին կոնծելուց հետո... Այս «տողերը» նրա «Շերտ» ժողովածուի հենց առաջին բանաստեղծության սկիզբն են, եւ ողջ ժողովածուն հեղեղված է նման հիմարություններով: Բայց մի բան ճիշտ է խոստովանում հեղինակը, որ ինքը ցածրորակ «աշուղ է դարդիման».

Թափառական եմ, աշուղ եմ դարդիման, /Փուլ եկա, թեւաթափ մնացի, /Այրվ խուփ դուրս ելա էն ցավին հանդիման, /Շվարած կանգնեցի ու լացի:

Բայց, ինձ թվում է, ոչ միայն «այրվ է խուփ», այլեւ «միտը»: Այս «ցավը լացով կշտացնելու» պրոցեսը, հանկարծ, դառնում է... «կասկասեր մուժ».

Կասկասեր մուժ էի ես /Տիեզերքի վերնահարկում, /Ծփում էի խաղաղ ու հեզ /Պարադության մեջ ահարկու:

Գրում է «տիեզերքի վերնահարկում», բայց գործը «ներքնահարկի» է, այն էլ՝ գոնացած: Պարզ է խեղճ «աշուղի» վիճակը: Երբ արաղ կամ գարեջուր չկա, հայտնվում է «պարադության մեջ ահարկու... հետո... ծփում»: Միջակությունից էլ ցածր այս մտավարժանքները «խմբագրել» է Ֆելիքս Մելոյանը. ինչպիսի «հեղինակ», այնպիսի «խմբագիր»: Տարիներ առաջ «Գրական թերթում» ես այս վայ-ֆենադասի՝ Ֆ. Մելոյանի խղճուկ հորինվածքների մասին կարծիք ասել եմ՝ ցույց տալով նրա հետադեմ «գրականագիտական» հայացքների ողջ անհեթեթությունը: Բայց շարունակենք ներկայացնել «արաղախառն» զառանցանքների հեղինակ Խաչիկ Մանուկյանի մյուս «գոհարները»:

Արաղի ու գարեջրի թեման անցնում է նրա համարյա բոլոր «նեյնիմների» դառնալով մտագարի սեւեռում. «Ես ո՞վ է անցնում՝ կերած-խմած, պարպած կրակը խաս թասերի...», «Խմեմ, մինչեւ որ բանա արեւն իր գիրկը...», «Երեկոյան մեմ միասին հարբում էինք գինետանը...», «Գավերում անտիկ գարեջուր /ադիտած ձկներ սեղանին...», «Քանի կանք /երգ սիրեմ, կին սիրեմ ու գինի» եւ դրանց նման բազում հնամաշ տողեր ու ցանկություններ:

Կարդում ես եւ աղջում. թվում է, գրողը Պարսկաստանի մի խուլ, թրfոs գյուղում է աղրում, չկան Հայաստան երկրի ծանր-լարված տնտեսական եւ հոգեբանական վիճակները, այլ միայն սեր, գինի, «անտիկ գարեջուր»... Ահա կլասիկ մի այլ անհեթեթություն, որտեղ պարզվում է ազգովին... «Երկնքի մեջ ենք /ասի՝ աղու, աղու /մնաց շունչս փչեմ»: Չեմ կարծում այդքան շուտ «շունչը փչի», որովհետեւ «սպասումներ» ունի. «Միայն գիտեմ, որ

իմ թվառ անտեր /ամուլ եզներն են հիմա զորանում»: Ճիշտ է խոստովանում. անճաշակության եւ թվառության «ամուլ եզները» հիմա զորանում են, այն էլ ինչ տեմպերով. էլ սարի սմբուլ, էլ գոսացած, ոչինչ չասող մտավարժանքներ, էլ որն ասեմ, էլ որը. «Երգ է արարում, /դեռ թլոլ լեզվով»: Եվ այսպես, ազգին երկինք «տեղափոխելուց» հետո, անցնում է երկրային թափառումների եւ տենչում վայելքների, արբիտ ֆեֆերի եւ «լակելու» համար «գերագույն խաղաղություն», «Ոչինչ լիներ, լիներ ոչինչ, բան չլիներ (՞) /խելակորույս ժամանակը լրիվ պարպված..., /ոչ մի շարժում, ոչ մի ֆանի, ոչ մի աճ»: Նախ, փա՞ռք Աստծուն, որ «ֆանին» «աճ» չի ունենում, թե չէ կշարունակվեր Խաչիկ Նեյնիմիկի ռաբիսը, որի գերագույն պահը կյանքում, պարզվում է, հենց իր փնված... «սթրիփթիզն» է.

Ասաց՝ շաթիկս կուզե՞ս հանեմ /ասացի ես քո ցավը տանեմ:

Սա է Նեյնիմիզմի ողջ «պոետիկան» եւ ինչպես ինքն է գրում. «Ես տեղերում կան դեռ /սերը, խինդը, ջանքը»: Հարց՝ «Ես տեղերում» է՞լ ինչ կա, մի լավ մահակ չկա՞, որ ի-ջեցնենք քո անհամ «սիխների» կզակին, պարզվում է կա՝ պարի մամոռս մահակը, որ պետք է իջնի ոչ ավելի, ոչ պակաս... Եվրախորհրդի մեջքին, որն, ըստ բարբաջողի, չարիքի կենտրոն է դարձել («Կապուտակ շորեր հագած ոսիկանի հետ գինարբուքից հետո» ինչպիսի անցում դեպի... Եվրախորհուրդ), բայց պարզվում է՝ Եվրախորհուրդը «կոիմանա իմ արքուն /պարիս մահակին (՞), դրա համար հանկարծ դիմում է թախանձանքի՝ «մեզ թող մեր համ ու հոտով (՞) /արեւմուտքի էգ», որովհետեւ ինչպես ոտանավորչին է գրում՝ «Քո պաղ գիրկը ով մտավ /թեց փայտիկին»: Իհարկե, դեռ անհայտ է, թե ով «թեց փայտիկին», բայց ստույգ է, որ այս նեյնիմից զզված ընթերցողը հաստատ ստիպված է թքել ոչ միայն «փայտիկին», այլեւ... Եվ այսպես, այս խիստ կասկածելի «համ ու հոտով» նա սպառնում է... Եվրոպային: Իսկ ո՞րն է «համ ու հոտովը». պարզվում է, «ոչի մոգին» է եւ տան «շեմին փռված աթարը»: Ահա այս «ընտիր բույրերով» է, որ պետք է դիմակայեմք... Եվրոպային եւ քաղաքակրթությանը, գուցե եւ, ինչու չէ, «դասեր տանք» հետամնաց ֆրանսիացիներին: Բայց այստեղ, արի ու տես, մի վտանգ է ահագնանում, բայց ոչ թե Եվրոպայի, այլ հենց «ոչի մոգու» կողմից, որովհետեւ խեղճ հայվածն այնպես է մթագնել խեղճի ուղեղը, որ մեր լավագույն ֆենադասներից մեկին դիմում է այսպիսի լկտի տոնով. «Չեմ կարծում, թե ֆո տարիքի մարդը կարող է խիղճը կորցնել, բայց ուղեղի մթագնումներ, ցավոք, լինում են...»: Եվ երբ կարդում էի հոդվածը, որտեղ նա Ս. Արզումանյանին եւ ինձ ճաշակի ու պոեզիայի իր «չափանիշներով» «գնահատման» դասեր է տալիս, հանկարծ հիշեցի՝ շաբաթներ առաջ, նույն «Գրական թերթում» (28.11.03) նա ընդարձակ «շարք» էր տպել, որը տպավորվեց անհեթեթ հանգերով եւ աշուղական «շուտասելուկներով»: Չարժեր անդրադառնալ այդ ցածրորակ հորինվածքներին, բայց երբ աղաշնորհ մեկը վաստակաշատ ֆենադասին փորձում է իր նեյնիմ-մեյնիմի հանգույն «դասեր» տալ, մեջս ցանկություն առաջացավ տեսնել, թե այս տափակաբանի չափածո՞ն ինչպիսին է: Ահա, նրա «բանաստեղծական» գոհարներից մի քանիսը.

Սկզբում օրի, վերջում գարեջուր-
/պաստիրաններից սա է մնացել:
/Չոչ է անում իմ երկիրը պուճուր,
/Չոչ է անում իմ հայրենիքը ծեր...

Այսինքն, խեղճ «հայրենիքը» այնքան է խմել, որ սկիզբում «չոչ» է անում, անում է այն, ինչ անում է ոտանավորչին կոնծելուց հետո... Այս «տողերը» նրա «Շերտ» ժողովածուի հենց առաջին բանաստեղծության սկիզբն են, եւ ողջ ժողովածուն հեղեղված է նման հիմարություններով: Բայց մի բան ճիշտ է խոստովանում հեղինակը, որ ինքը ցածրորակ «աշուղ է դարդիման».

Թափառական եմ, աշուղ եմ դարդիման, /Փուլ եկա, թեւաթափ մնացի, /Այրվ խուփ դուրս ելա էն ցավին հանդիման, /Շվարած կանգնեցի ու լացի:

Բայց, ինձ թվում է, ոչ միայն «այրվ է խուփ», այլեւ «միտը»: Այս «ցավը լացով կշտացնելու» պրոցեսը, հանկարծ, դառնում է... «կասկասեր մուժ».

Կասկասեր մուժ էի ես /Տիեզերքի վերնահարկում, /Ծփում էի խաղաղ ու հեզ /Պարադության մեջ ահարկու:

Գրում է «տիեզերքի վերնահարկում», բայց գործը «ներքնահարկի» է, այն էլ՝ գոնացած: Պարզ է խեղճ «աշուղի» վիճակը: Երբ արաղ կամ գարեջուր չկա, հայտնվում է «պարադության մեջ ահարկու... հետո... ծփում»: Միջակությունից էլ ցածր այս մտավարժանքները «խմբագրել» է Ֆելիքս Մելոյանը. ինչպիսի «հեղինակ», այնպիսի «խմբագիր»: Տարիներ առաջ «Գրական թերթում» ես այս վայ-ֆենադասի՝ Ֆ. Մելոյանի խղճուկ հորինվածքների մասին կարծիք ասել եմ՝ ցույց տալով նրա հետադեմ «գրականագիտական» հայացքների ողջ անհեթեթությունը: Բայց շարունակենք ներկայացնել «արաղախառն» զառանցանքների հեղինակ Խաչիկ Մանուկյանի մյուս «գոհարները»:

Արաղի ու գարեջրի թեման անցնում է նրա համարյա բոլոր «նեյնիմների» դառնալով մտագարի սեւեռում. «Ես ո՞վ է անցնում՝ կերած-խմած, պարպած կրակը խաս թասերի...», «Խմեմ, մինչեւ որ բանա արեւն իր գիրկը...», «Երեկոյան մեմ միասին հարբում էինք գինետանը...», «Գավերում անտիկ գարեջուր /ադիտած ձկներ սեղանին...», «Քանի կանք /երգ սիրեմ, կին սիրեմ ու գինի» եւ դրանց նման բազում հնամաշ տողեր ու ցանկություններ:

Կարդում ես եւ աղջում. թվում է, գրողը Պարսկաստանի մի խուլ, թրfոs գյուղում է աղրում, չկան Հայաստան երկրի ծանր-լարված տնտեսական եւ հոգեբանական վիճակները, այլ միայն սեր, գինի, «անտիկ գարեջուր»... Ահա կլասիկ մի այլ անհեթեթություն, որտեղ պարզվում է ազգովին... «Երկնքի մեջ ենք /ասի՝ աղու, աղու /մնաց շունչս փչեմ»: Չեմ կարծում այդքան շուտ «շունչը փչի», որովհետեւ «սպասումներ» ունի. «Միայն գիտեմ, որ

իմ թվառ անտեր /ամուլ եզներն են հիմա զորանում»: Ճիշտ է խոստովանում. անճաշակության եւ թվառության «ամուլ եզները» հիմա զորանում են, այն էլ ինչ տեմպերով. էլ սարի սմբուլ, էլ գոսացած, ոչինչ չասող մտավարժանքներ, էլ որն ասեմ, էլ որը. «Երգ է արարում, /դեռ թլոլ լեզվով»: Եվ այսպես, ազգին երկինք «տեղափոխելուց» հետո, անցնում է երկրային թափառումների եւ տենչում վայելքների, արբիտ ֆեֆերի եւ «լակելու» համար «գերագույն խաղաղություն», «Ոչինչ լիներ, լիներ ոչինչ, բան չլիներ (՞) /խելակորույս ժամանակը լրիվ պարպված..., /ոչ մի շարժում, ոչ մի ֆանի, ոչ մի աճ»: Նախ, փա՞ռք Աստծուն, որ «ֆանին» «աճ» չի ունենում, թե չէ կշարունակվեր Խաչիկ Նեյնիմիկի ռաբիսը, որի գերագույն պահը կյանքում, պարզվում է, հենց իր փնված... «սթրիփթիզն» է.

Ասաց՝ շաթիկս կուզե՞ս հանեմ /ասացի ես քո ցավը տանեմ:

Սա է Նեյնիմիզմի ողջ «պոետիկան» եւ ինչպես ինքն է գրում. «Ես տեղերում կան դեռ /սերը, խինդը, ջանքը»: Հարց՝ «Ես տեղերում» է՞լ ինչ կա, մի լավ մահակ չկա՞, որ ի-ջեցնենք քո անհամ «սիխների» կզակին, պարզվում է կա՝ պարի մամոռս մահակը, որ պետք է իջնի ոչ ավելի, ոչ պակաս... Եվրախորհրդի մեջքին, որն, ըստ բարբաջողի, չարիքի կենտրոն է դարձել («Կապուտակ շորեր հագած ոսիկանի հետ գինարբուքից հետո» ինչպիսի անցում դեպի... Եվրախորհուրդ), բայց պարզվում է՝ Եվրախորհուրդը «կոիմանա իմ արքուն /պարիս մահակին (՞), դրա համար հանկարծ դիմում է թախանձանքի՝ «մեզ թող մեր համ

ԿԱՊԵՐ

Ավարտված ցուցահանդես Դուբայում, սպասվող համաժողով Սանկտ Պետերբուրգում

Զարգացման հայկական գործակալության տնօրեն Վահագն Մովսիսյանը երեկ անդրադարձավ ապրիլի 5-ին Արաբական Միացյալ Էմիրություններում (Դուբայ) տեղի ունեցած հայկական ապրանքների ցուցահանդեսին: Նա նշեց, որ ներկայացված էին սննդարդյունաբերության, ոսկերչության, շինանյութերի արտադրության, դեղագործության եւ քիմիայի ոլորտի ավելի քան 2 տասնյակ ձեռնարկություններ: Ըստ գործակալության տնօրենի, ցուցահանդեսի նպատակն էր այդ երկրի ներդրողների ուշադրությունը հրավիրել Հայաստանի վրա եւ արտահանման շուկաներ գտնել հայկական ընկերությունների համար: Լրագրողներին ցուցահանդեսից տպավորություններ պատմեցին նաեւ ընկերությունների ներկայացուցիչները: Նրանք ընդհանուր առմամբ հաջողված համարեցին միջոցառումը, նշելով, որ հնարավորություն ունեցան հանդիպելու տեղի գործարարների հետ եւ ուսումնասիրելու արաբական շուկան: Սակայն գրեթե բոլորն էլ նշեցին, որ կոնկրետ արդյունքների մասին վաղ է խոսելը:

Վահագն Մովսիսյանը տեղեկացրեց նաեւ, որ այս տարվա հունիսի 15-17-ը Սանկտ Պետերբուրգում կկայանա խոշոր միջազգային տնտեսական համաժողով, որին սպասվում է Համաշխարհային բանկի նախագահի, ՀՀ նախագահի եւ այլ բարձրաստիճան անձանց մասնակցությունը: Այդ համաժողովի ցուցահանդեսային մասը բաղկացած է երեք բաժիններից՝ «Ռուսաստան-Հայաստան՝ փոխշահավետ համագործակցության ուղիները», «Ռուսաստանի հարավային դաշնային օկրուգ», «Բաց Չեխիա»: Գործակալության տնօրենի հավաստմամբ, համաժողովին կմասնակցեն ԱՊՀ տարածքում գործող ավելի քան 2 հազար ներդնողներ: Ռուսաստանի եւ Հայաստանի համագործակցության զարգացման հնարավոր ոլորտներ են դիտարկվում էներգետիկան, սննդարդյունաբերությունը, մեքենաշինությունն ու սարքաշինությունը, սեւ, գունավոր եւ թանկարժեք մետաղների մշակումն ու արտադրությունը: Դատելով գործակալության տնօրենի խոսքերից, ակնկալիքներն այս համաժողովից մեծ են: Սակայն չմոռանանք, որ առավել մեծ ակնկալիքներ Զարգացման հայկական գործակալությունն ուներ նաեւ 2001 թ.-ին Նյու Յորքում հրավիրված Հայաստանին նվիրված միջազգային գործարար համաժողովից, որի արդյունքների մասին այսօր նախընտրում են չխոսել:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Լիբանանցիները տպավորված են Հայաստանից

Առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարությունը երեկ հյուրընկալել էր «Աշծյան տուր» լիբանանյան ընկերության միջոցով Հայաստան այցելած գբոսաշրջիկներին: Այս անգամ ընկերության սեփականատեր Հովսեփ Աշծյանի աջակցությամբ մեր երկրում էին գտնվում Լիբանանի Սեն-Ժոզեֆ ֆրանսիական հայտնի համալսարանի դասախոսներն ու ուսանողները: 22 հոգուց բաղկացած այս խումբը մեկ շաբաթվա ընթացքում շրջագայել է Հայաստանի գրեթե բոլոր տեսարժան վայրերով: Ինչպես լրագրողներին տեղեկացրեց առեւտրի եւ տնտեսական զարգացման փոխնախարար Արա Պետրոսյանը, այս խմբում ընդգրկված դասախոսները վերադառնալով հայրենիք, դասընթացներ պետք է կազմեն նվիրված Հայաստանի պատմությանն ու մշակույթին, դրանք Սեն-Ժոզեֆի համալսարանում դասավանդելու հեռանկարով:

Հովսեփ Աշծյանն իր հերթին այն կարծիքը հայտնեց, որ Հայաստանը հնարավորություն ունի տարեկան 3 մլն զբոսաշրջիկ ընդունելու: Սփյուռքահայերի պարտքն է աջակցել զբոսաշրջության զարգացմանը Հայաստանում, նշեց նա, ավելացնելով, որ «Աշծյան տուրն» ամեն տարի 3-4 հազար զբոսաշրջիկ է բերում մեր երկիր:

Հանդիպման ժամանակ արաբ դասախոսներն ու ուսանողներն իրենց տպավորությունները հայտնեցին Հայաստանից: Նրանք հիացած էին մեր բնաշխարհով, պատմական հուշարձաններով եւ մարդկանց սիրալիրությամբ: Նրանց հուզող ամենալուրջ խնդիրը լեզվականն էր, որովհետեւ բնակչության մեծ մասը չի տիրապետում որեւէ օտար լեզվի:

Ա. Մ.

ԱՌԱՏՅՈՒՆ ԼՈՒՐԸ՝
ԱՌԱՏՅՈՒՆ ՍԼՈՔՈՎ

Ուզո՞ւմ եք ամենավերջին իրադարձություններին եւ օրվա մամուլի հրապարակումներին ծանոթանալ ամենաառաջինը
Ուզո՞ւմ եք լսել բազմակողմանի վերլուծություն եւ անաչառ մեկնաբանություն

Հետեւեք
Հայաստանի Հանրային ռադիոյի
«Ռադիոլուր» եւ «Ռադիոպրես»

լրատվական-վերլուծական ծրագրերին ամեն օր ուղիղ եթերում
ժամը 6.00, 8.00, 10.00, 11.00, 12.00, 13.00, 14.00, 15.00 (հայերեն եւ ռուսերեն տարբերակներով), 17.00, 18.00, 22.00, 23.00
«Ռադիոպրեսը»՝ օրվա մամուլի տեսությամբ եթերում է ժամը 10.30-ին

18.00-ին Հիմնական թողարկումը
Օդերեւութաբանական լրատվություն
Բազմակողմանի վերլուծություն
Անաչառ մեկնաբանություն
Հյուր՝ ուղիղ եթերում
Լրագրողական հետաքննություն
Մամուլի տեսություն «Ռադիոպրես»

Մեզ տարբեր ժամերի կարող եք լսել
62, 215, 1282 մետր ալիք, FM 102 եւ FM 107.6,
4,3 մետր ԳԿԱ ռադիոկայաններով, քաղաքային լարային ցանցով,
ինտերնետով. www.armradio.am

ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆ
ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ

Դատական գործ N C99-12073 CAS (MCx)

ՄԱՐՏԻՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ եւ բոլ., իրենց անունից
եւ բոլոր նրանց անունից, ովքեր գտնվում են նույնատիպ իրավիճակում,

Հայցվորներ՝

ընդդեմ

«ՆՅՈՒ ՅՈՐՔ ԼԱՅՖ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Պատասխանող՝

ԽՄԲԱՅԻՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԿԱԽ ՎԻՃԱԿԻ ԵՎ
ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ԲՈԼՈՐ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՑՈՂՆԵՐԻՆ, ՆՐԱՆՑ ԺԱՌԱՆԳՈՐԴՆԵՐԻՆ, ԱՊԱՀՈՎԱԳՐԵՐԻ ՏԵՐԵՐԻՆ, ՏԵՐԵՐԻ ԺԱՌԱՆԳՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԲՈԼՈՐ ԱՅՆ ԱՆՁԱՆՑ, ՈՎՔԵՐ ՈՒՆԵՆ ՈՐԵՎԻՑԵ ԲՆՈՒՅԹԻ ՊԱՀԱՆՋ ՀԵՏԵՎՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ԿՅԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԵՐԻ ԴԻՄԱՑ՝ 1) ԱՊԱՀՈՎԱԳՐԵՐՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԵԼ ԵՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՅԱՆՔԸ, 2) ԴՐԱՆՔ ՎԱՃԱՌՎԵԼ ԵՆ «ՆՅՈՒ ՅՈՐՔ ԼԱՅՖ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ՆՅԼԱԸ) ԿՈՂՄԻՑ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1875 Թ. ԵՎ ԴՐԱՆԻՑ ՀԵՏՈ, 3) ԴՐԱՆՔ ՈՒԺԻ ՄԵՋ ԷԻՆ 1915 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ի ՏՎՅԱԼՆԵՐՈՎ, ԵՎ 4) ԴՐԱՆՑ ԴԻՄԱՑ ՉԻ ԿԱՏԱՐՎԵԼ ՄԱՀՎԱՆ ՀԱՍՈՒՅԹԻ, ԱՊԱՀՈՎԱԳՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՐԺԵՔԻ, ԿԱՆԽԻԿ ԱՐԺԵՔԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՈՐԵՎԻՑԵ ՈՒՐԻՇ ՏԵՍԱԿԻ ՎՃԱՐՈՒՄ:

Այս հայտարարագրի նպատակն է տեղեկացնել ձեզ հետեւյալ խմբային դատավարության առաջարկված համաձայնության մասին՝ Մարտին Մարության եւ բոլ., իրենց անունից եւ բոլոր նրանց անունից, ովքեր նույնատիպ իրավիճակում են ու կազմում են հայցվորների խումբը, ի դեմս հայցվորներ, ընդդեմ «Նյու Յորք լայֆ» ապահովագրական ընկերության, ի դեմս պատասխանող, դատական գործ N C99-12703 CAS (MCx) («Դատավարություն») Միացյալ Նահանգների շրջանային դատարանի Կալիֆորնիայի կենտրոնական շրջանում («Դատարան»): Առաջարկված համաձայնությունը շարադրված է համաձայնագրի մեջ եւ մանրամասն բացատրված է դատավարության եւ առաջարկված համաձայնության հավելյալ հայտարարագրի մեջ («Հավելյալ խմբային հայտարարագիր»), որը հնարավոր է տեսնել, տեղափոխել եւ դուրս տալ www.ArmeniaInsuranceSettlement.com համաձայնության համակարգչային ցանցային էջից: Առաջարկված համաձայնության իրավական դրությանը վերաբերող ընդհանուր բնույթի տեղեկությունը, ինչպես նաեւ համաձայնության վավերացումից հետո նրա մեջ մասնակցելու եղանակները եւ պահանջները տեղադրված են համաձայնության համակարգչային ցանցային էջի վրա եւ պարբերաբար կլրացվեն վերջին տվյալներով:

Այս դատավարությունը պնդում է, որ ՆՅԼԱԸ-ն անիրավ կերպով ձախողեց հատուցումներ վճարելը 1875 թ. ու դրանից հետո Օսմանյան կայսրությունում հայկական ծագում ունեցող մարդկանց վաճառված իր կյանքի ապահովագրերի դիմաց՝ ՆՅԼԱԸ-ը հերքում է այս պնդումները, հավատում է, որ նրանք կեղծ են ու ապակողմնորոշող, եւ առաջ է բերել մի շարք հակաճառություններ հայցվորների պնդումներին: Առաջարկված համաձայնությունը չպետք է մեկնաբանվի որպես որեւիցե պատասխանատվության կամ սխալ գործողության ընդունում կամ հարուցված որեւիցե պահանջի զորության կամ տկարության նշան:

Այն պարագայում, երբ դատարանը վավերացնի առաջարկված համաձայնագիրը, ՆՅԼԱԸ-ը համաձայնվել է վճարել 20 միլիոն դոլար, որը կտրվի՝ 1) խմբի այն անդամներին, որոնք դուրս չեն եկել հայցվորների խմբից եւ որոնց անհատական հայցերը ներկայացվել են համաձայնության հիմնադրամի խորհրդին ու վավերացվել նրա կողմից, ինչպես նախատեսված է համաձայնագրի մեջ, 2) հայ բարեգործական կազմակերպությունների հիմնադրամին, 3) համաձայնության վարչական ծախսերը հոգալուն, եւ 4) հայցվորների դատապետներին՝ նրանց վարձատրության եւ ծախսերի դիմաց: Առաջարկված համաձայնագիրը նախատեսում է ազատել ՆՅԼԱԸ-ը եւ հարակից բաժանմունքները (ինչը սահմանված է համաձայնագրի մեջ) յուրաքանչյուր եւ բոլոր ենթակա պահանջներից եւ/կամ խմբային հայցերից (ինչը սահմանված է համաձայնագրի մեջ):

2004 թ. հուլիսի 30-ին առավոտյան ժամը 9:30 (Արեւմտյան Ամ., տեղական ժամանակով) տեղի է ունենալու դատական ունկնդրություն մեծարգո դատավոր Քրիսթինա Ա. Շնայդերի առջեւ, որի ժամանակ պետք է որոշվի, թե արդյոք 1) առաջարկված համաձայնությունը, ինչպես ներկայացված է դատարանի թղթապանակում գտնվող համաձայնագրի մեջ, պե՞տք է վավերացվի որպես արդար, պատշաճ ու ընդունելի, եւ պաշտպանող հայցվորների խմբի անդամների շահերը, 2) հայցվորների խումբը պե՞տք է վավերացվի որպես համաձայնագրի իրականացման համար ճիշտ խումբ, 3) պե՞տք է կայացվեն վերջնական հրաման եւ դատավճիռ, որոնք կհաստատեն համաձայնագիրը, կփակեն դատավարությունը կանխակալ կարծիք արտահայտելով եւ արժանիքների վրա հիմնվելով, կլուծարե՞ն «Նյու Յորք լայֆի» եւ հարակից բաժանմունքներին դեմ բոլոր առկա պահանջները, 4) դատարանը պետք է վավերացնի փաստաբանների վարձատրման ու ծախսերի փոխհատուցման դիմումը, եւ 5) դատարանը պետք է վավերացնի հայցվորների խմբի ներկայացուցիչների անհատական հատուցման դիմումը: Առաջարկված համաձայնագիրը եթե վավերացվի դատարանի կողմից, կլուծարի ՆՅԼԱԸ-ի եւ/կամ հարակից բաժանմունքների դեմ հարուցած որեւիցե խմբային հայցեր (ինչը սահմանված է համաձայնագրի մեջ):

Եթե դուք հայցվորների խմբի անդամ եք, դուք կարող եք իրագործել համաձայնությունից բացառվելու ձեր իրավունքը, ինչը մանրամասն բացատրված է հավելյալ խմբային հայտարարագրի մեջ: Հայցվորների խմբի այն անդամները, ովքեր կնախընտրեն դուրս գալ համաձայնությունից, սահմանափակված չեն լինի վերջնական հրամանի պայմաններով: Եթե դուք ցանկանաք դուրս գալ առաջարկված համաձայնագրից, դուք պետք է ժամանակին ներկայացնեք գրավոր խնդրանք յուրաքանչյուր ենթակա պահավագրի համար, որը դուք ցանկանում եք բացառել համաձայնագրից՝ համապատասխան հավելյալ խմբային հայտարարագրի պայմաններին: Ձեր խնդրանքի վրայի փոստատան կնիքը պետք է նշված լինի **2004 թ. հունիսի 15-ից** ոչ ուշ: Խնդրանքը պետք է հասցեագրվի **Marootian v. New York Life Class Action Settlement, c/o Settlement Administrator, P. O. Box 5053, Portland, Oregon 97208-5053, United States of America**: Խնդրանքի մեջ պետք է նշված լինի հետեւյալը՝ 1) ձեր անունը/ազգանունը, հասցեն, հեռախոսի համարը, 2) տեղեկություն այն ենթակա պահավագրի մասին, որը դուք ցանկանում եք բացառել համաձայնագրից (պահավագրի համարը, օրը/ամիսը/տարին, տիրոջ անունը, պահավագրվածի անունը, ենթակա պահավագրի վաճառման վայրը, եւ/կամ պահավագրող նախատեսված մահվան հասույթի գումարը), 3) հստակը հայտարարություն, որ դուք խնդրում եք բացառել ձեզ համաձայնագրից եւ չեք ցանկանում ստանալ համաձայնագրով տրամադրվող ոչ մի հատուցում: Եթե դուք չեք ցանկանում բացառվել համաձայնագրից եւ մտադիր եք առարկելու առաջարկված համաձայնագրի պայմանները, դուք պետք է դատական կարգով ներկայացնեք ձեր գրավոր առարկությունները մինչեւ **2004 թ. հունիսի 15-ը**՝ հետեւելով հավելյալ խմբային հայտարարագրի ընթացակարգին:

Վերոհիշյալը միայն ամփոփագիր է: Համաձայնագրի մանրամասնությունները, ներառյալ համաձայնության մեջ մասնակցելու եղանակները եւ պահանջները բացատրված են հավելյալ խմբային հայտարարագրի մեջ, որը հնարավոր է տեսնել, տեղափոխել եւ դուրս տալ համաձայնության համակարգչային ցանցային էջի վրայից (www.ArmeniaInsuranceSettlement.com): Առաջարկված համաձայնագրի պատճենն առկա է նաեւ դատական թղթապանակի մեջ, որը Միացյալ Նահանգների շրջանային դատարանի Կալիֆորնիայի կենտրոնական շրջանի դատարանի գործակատարի գրասենյակում է:

2004 թ., 19 փետրվարի

ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՀՐԱՄԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ

ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՀՆԱՐՔԵՐ

Հակահայկական խաղեր հայերի միջոցով

Ադրբեջանական մամուլն այս օրերին ողողված է հրապարակումներով հայ փախստականներ Ռոման Թարյանի եւ Արթուր Ամրեսյանի Բաքվում հրավիրված մամուլի ասուլիսի վերաբերյալ: Մեր հարեւան երկրի լրատվամիջոցներն անթաքույց հրճվանքով են ծամծմում այս թեման: Բնական է, երկու հայ եկել հասել են Բաքու՝ հայրենիքը փնովելու:

Ռոման Թարյանն ու Արթուր Ամրեսյանն իրականում գոյություն ունեցող մարդիկ են, որոնք իսկապես գաղթել են Բաքվից, տասը տարուց ավելի ապրել են Հայաստանում: Այս մասին տեղեկացանք ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի եւ փախստականների վարչության պետ Գագիկ Եգանյանից: Ռոման Թարյանն ապրել է Երեւանում, Կորյունի 23 հասցեում, աշխատել է խանութում: Գագիկ Եգանյանի խոսքով, բազմաթիվ փախստականներ են այժմ դիմում վարչություն՝ վրդովված, իրենց խոսքով ասած, հայրենիքի դավաճանների արարքից: Ի դեպ, վարչություն է եկել նաեւ Ռոման Թարյանի նախկին կինը՝ Սիդան: Նա նշել է, թե եւս մեկ անգամ համոզվել է, որ ճիշտ է արել ամուսնալուծվելով, միայն ցավում է, որ իր երկու երեխաները կրում են Թարյան ազգանունը:

Առանց խորը վերլուծության նույնիսկ պարզ է, որ կատարվածը մեր հարեւան երկրի ձեռքի գործն է: Նպատակը՝ կրկին ցեխ շպրտել Հայաստանի վրա, թե իբր Հայաստանը թաղված է կոռուպցիայի եւ անօրինականության մեջ, իսկ Ադրբեջանն այնքան ժողովրդավար է, որ պատրաստ է նույնիսկ հալածված հայերին հյուրընկալել Բաքվում: Ցավոք, այս անգամ համաշխարհային հանրության աչքերին թոզ է փչվում մեր հայրենակիցներին օգտագործելու ճանապարհով, որոնց հավանաբար ինչ-որ բան են խոստացել: Հերթական ադրբեջանական խաղն է, պարզ է նույնիսկ առանց խորը վերլուծության: Բավական է ընդամենը մի քանի տրամաբանական հարց տալ եւ փորձել ստանալ դրանց պատասխանները: Առաջինը եւ հիմնականը՝ ինչպե՞ս են հայերը հասել Բաքու: Պարզ է, որ առանց Ադրբեջանի իշխանությունների օգնության հայերը հաստատ Բաքու չէին հասնի: Բավական է հիշել ոչ վաղ անցյալում ադրբեջանական հիստերիան, երբ հայերը Բաքվում պետք է մասնակցեին ՆԱՏՕ-ի գործընկերություն հանուն խաղաղության ծրագրի շրջանակներում անցկացվող զորավարժություններին:

Ակնհայտ է, որ այս երկուսը Բաքու էին հասել ոչ միայն Հայաստանում փախստականների ծանր սոցիալական վիճակից դժգոհելու համար, մանավանդ եթե հաշվի առնենք, որ Ադրբեջանում փախստականներն ապրում են վրաններում՝ բաց երկնքի տակ: Նրանց բողոքն ակնհայտորեն ճիշտ հասցեով չէր: Մեր հայրենակիցների շուրթերով բարձրացվել են քաղաքական խնդիրներ: Նրանք ասել են, թե ատում են Ռոբերտ Քոչարյանին եւ համարում, որ Ստեփան Դեմիրճյանը պետք է ղեկավարի Հայաստանը: Պարզ է, թե ինչու Ադրբեջանում Ռոբերտ Քոչարյանին չեն սիրում, սակայն նկատենք, որ Ստեփան Դեմիրճյանին փաստորեն իր հայրենակիցներն արջի ծառայություն են մատուցում:

Ինչպիսի՞ն է լինելու Ռոման Թարյանի եւ Արթուր Ամրեսյանի ճակատագիրը: Նրանք, թերեւս, հույս ունեն, որ բարձրացված աղմուկից հետո իրենց կհաջողվի որեւէ բարեկեցիկ երկրում ապաստան գտնել: Իսկ գուցե մեր հայրենակիցները մտադիր են Բաքվում մնալ, եթե նրանց այդքան լավ են վերաբերվում: Հայաստանի միգրացիայի եւ փախստականների վարչությունում Ռոման Թարյանի եւ Արթուր Ամրեսյանի պահվող գործերում նրանք նշել են, որ ժամանակին Բաքվում չորս սենյականոց բնակարաններ են կորցրել: Երեւի հույս ունեն հետ բերել դրանք: Սակայն զգուշությունը նրանց չի խանգարի, միշտ մնալու է գիշերը կացնահարվելու վտանգը:

Մ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Սեփականաշնորհման օրենքը ժամանակավրե՞պ է

Ապրիլի 14-ին ԼՂՀ խորհրդարանը գումարեց իր հերթական նիստը: Սակայն մինչեւ նիստն սկսելը պատգամավորներն այցելեցին Ստեփանակերտի հուշահամալիր եւ ծաղիկներ դրեցին Աժ խորհրդարանի առաջին նախագահ, վաղամեռիկ Արթուր Մկրտչյանի շիրմահարին, որի ողբերգական մահվան տարելիցը լրանում էր այդ օրը:

Այնուհետեւ, վերադառնալով Աժ նիստերի դահլիճ, պատգամավորները ձեռնամուխ եղան օրակարգային հարցերի քննարկմանը, որոնք ներառում էին տարբեր ոլորտային փաստաթղթեր: Եթե ֆինանսական եւ հարկային ոլորտներին վերաբերող օրինագծերն առանձին տարակարծություններ չհարուցեցին, ապա, մասնավորապես, «Կառավարության մասին» օրենքի նախագիծը տարակարծությունների տեղիք տվեց: Առաջին ընթերցմամբ ընդունված օրինագիծը լրամշակվելուց հետո էլ համընկալում չունեցավ հետեւյալ հարցում՝ պահպանե՞լ փոխվարչապետի պաշտոնը, թե՞ ոչ: Գործադիրի մոտեցումն այս առնչությամբ դրական էր, եւ դրա նպատակահարմարությունը հվեարկության դրվելով՝ օրենքն ընդունվեց ամբողջական տեսքով: Իսկ թե քանի փոխվարչապետ կարող է ունենալ կառավարությունը, թողնվեց ԼՂՀ նախագահի վերապահությանը:

Օրենսդիր-գործադիր տարընկալումներ դրսեւորվեցին նաեւ «Պետական գույքի սեփականաշնորհման մասին» օրենքի քննարկման ժամանակ: Տվյալ օրենքում փոփոխություններ կատարելու օրենսդրական նախաձեռնությամբ հանդես եկած պատգամավոր Էդուարդ Աղաբեկյանի կարծիքով այդ եւ «Քաղաքացիական օրենսգրքի» միջեւ կա դրույթների հակասություն, կոնկրետ՝ սեփականության բոլոր ձեւերի հավասարության ու անձեռնմխելիության հաստատության մեջ: Ըստ է. Աղաբեկյանի, պետական մասնինը չպիտի զբաղվի համայնքային գույքի սեփականաշնորհմամբ, քանի որ կառավարությունը եւ համայնքի ինքնակառավարման մարմինն իբրեւ իրավաբանական անձինք իրավահավասար են: Դրան անհամաձայնություն հայտնեց կառավարության լիազոր ներկայացուցիչը, որի մի ելակետն էլ այն էր, որ Ստեփանակերտում, օրինակ, արդեն սեփականաշնորհվել են 420 օբյեկտներ, եւ ընդամենը 35 վարձակալված տարածք է մնացել: Այս տեսակետից նույնիսկ կարելի է ընդունվելիք օրենքը համարել ժամանակավրեպ:

Նշվեց նաեւ, որ Վերահսկիչ պալատի ստուգումներն ի հայտ են բերել դեպքեր, երբ սեփականաշնորհումը կատարվել է առանց ավագանու թույլտվության: Ոչ հազվադեպ նույնիսկ որոշ փայատիրական ընկերություններ պետականացվել են, այնուհետեւ՝ սեփականաշնորհվել:

Ընդունելով, որ օրենսդրական հակասություն իրոք կա, նիստը վարող Աժ նախագահ Օ. Եսայանը նշեց, որ պետք է վերջնականապես տարանջատվեն պետական, անձնական եւ համայնքային սեփականությունները: Քննարկումից հետո նշված օրենքն ընդունվեց առաջին ընթերցմամբ:

Համաձայն օրակարգի՝ հնչեցին հարցեր ուղղված կառավարությանը: Դրանցից մեկը վերաբերում էր զինակոչիկների կրկնակի բուժզննմանը: Պատգամավոր Ալլոա Գաբրիելյանի հարցին ԼՂՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը պատասխանեց, որ դա արվել է զորակոչի ժամանակ արդարության սկզբունքի պահպանման նպատակով: Ըստ ներկայացված տվյալների, զինծառայությունից հիվանդության պատճառով ազատված զինակոչիկների կրկնակի բուժզննումից պարզվել է, որ 113 հոգուց 49-ը պիտանի է ծառայության, իսկ 12 զինակոչիկ ուղարկվել է լրացուցիչ զննման: Հատկանշական է, որ դրանց մի զգալի մասը Արցախում ազդեցիկ համարվող անձանց զավակներ են: Աժ նիստին հրավիրված վարչապետ Անուշավան Դանիելյանն այդ կապակցությամբ առաջարկեց նման ծնողների ցուցակը ամբողջությամբ հրապարակել մամուլում, անկախ այն բանից, որ բարձրաստիճան որոշ անձինք անմիջապես անհանգստության զանգեր են հնչեցնելու:

Տեսակետ եղավ նաեւ, որ այս հարցում պատասխանատվության պետք է ենթարկվեն ոչ միայն իրենց զավակներին զինծառայությունից անօրեն ազատող ծնողները, այլեւ տվյալ բժշկական հանձնաժողովի անդամները:

ԳԵՎՈՐԳ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

Պաղեստինցի ազգայնականները կմիավորվեն ընդդեմ Իսրայելի

Իսրայելի վարչապետ Արիել Շարոնի վաշինգտոնյան այցի շրջանակներում ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը չորեքշաբթի օրը հավանություն տվեց Գազայի հատվածից հրեական բոլոր բնակավայրերը եւ Այսրհորդանանից դրանց մի մասը դուրս բերելու իսրայելական ծրագիրն՝ այն անվանելով «պատմական եւ խիզախ» նախաձեռնություն:

Պաղեստինյան տարածքներից Իսրայելը միակողմանիորեն անջատելու վարչապետ Շարոնի ծրագրի նկատմամբ Բուշի դրական վերաբերմունքը գայրացրել է պաղեստինցիներին: Յասեր Արաֆաթի «Ֆաթահ» շարժման ղեկավարներից Աբբաս Զաքին Բուշի դիրքորոշումն անվանեց «ռազմավարական լուրջ վիրավորում»:

Շարոնի ծրագրում մասնավորապես մերժվում է պաղեստինցի գաղթականների վերադարձի իրավունքը: «Իսլամական ջիհադ» ծայրահեղական խմբավորման ներկայացուցիչը հայտարարել է, թե դա հավասարազոր է «պաղեստինցի ժողովրդին պատերազմ հայտարարելուն»:

«Համաս» ծայրահեղական շարժման քաղաքականության ղեկավար Խալեդ Մաշալի կարծիքով, Վաշինգտոնում Ջորջ Բուշի եւ Արիել Շարոնի ելույթները վկայում են, որ «պաղեստինցիներին մնում է միայն մեկ բան՝ զինված դիմադրությունը»: Մաշալի խոսքերով, պաղեստինցի գաղթականների Իսրայել վերադառնալու իրավունքի ժխտումը եւ Այսրհորդանանում բնակավայրերը խոշորացնելու գաղափարը «ցրեցին այն պատրանքները, թե ԱՄՆ-ի հովանավորությամբ կարող է գոյություն ունենալ հաշտության գործընթաց, մերձավորարեւելյան կարգավորման «ուղեցույց» կամ «որեւէ այլ ծրագիր»:

Պ. Ք.

Մահացել է Նագասակին ռմբակոծողներից Ֆրեդ Օլիվին

Անցյալ օգոստոսին ուղեղի կաթված ստացած չիկագոյաբնակ Ֆրեդ Օլիվին, որը Նագասակիի վրա ատոմային ռումբ արձակող ինքնաթիռի օդաչուներից էր, ապրիլի 8-ին հաղթի արվարձաններից մեկի վերականգնողական կենտրոնում մահացել է 82 տարեկանում, հաղորդում է «Թեհران թայմս» թերթի ապրիլի 12-ի համարը: 1945 թ. օգոստոսի 6-ին Հիրոսիմայի վրա առաջին ատոմային ռումբը գցելուց 3 օր անց «Բոխկար» հորջորջված B-29 ռմբակուն հարվածեց Նագասակիին: Վեց օր անց ճապոնիան հանձնվեց եւ երկրորդ աշխարհամարտն ավարտվեց:

«Չնայած հազարավոր մարդիկ մահացան, զգում եմ, որ ռումբը պետք է գցվեր, որովհետեւ եթե ամերիկացիները ստիպված լինեին ներխուժել ճապոնիա, արյան բաղնիք էր ստեղծվելու», ասել էր Օլիվին 1995-ին «Չիկագո սան թայմսին» տված հարցազրույցի ընթացքում: Նա մեկն էր պատերազմի այն բազմաթիվ վետերաններից, որոնք բողոքի ձայն էին բարձրացրել ռմբակոծությունների 50-ամյակին նվիրված «Սմիթսոնյան հաստատությունում» կազմակերպած միջոցառման առնչությամբ: Նա բանակի օդուժի անդամ էր դարձել Պիոլ Հարբորի ռմբակոծություններից անմիջապես հետո: «Նա միշտ ցանկանում էր թռչել», ասել է ավագ եղբայր Էմիլը: Պատերազմից հետո նա ծառայել է օդուժի պահեստային զորքերում եւ հասել փոխգնդապետի աստիճանի: Մինչեւ թոշակի անցնելը վարել է նաեւ Չիկագո քաղաքի մաքրության եւ կամուրջների շահագործման ղեկավարի պաշտոնը:

60-ականների կեսերին ամուսնացել է Քերոլ Սկվեյի հետ, որը մահացել է 1998-ին: Մինչեւ կաթվածահար լինելը Օլիվին շատ է ճանապարհորդել, դասախոսություններ տվել եւ տարածել իր գիրքը՝ «Որոշում Նագասակիում» վերնագրով:

Հ. Օ.

вклад Нарекаци
Мудрость истории

- 1 месяц - 5% годовых
- от 1000 до 10000 USD или EURO
- досрочное изъятие - в течение 1 часа и начислением 2% годовых

вклад Хоренаци
Правота разума

- 3 месяца - 6% годовых
- от 1000 до 10000 USD или EURO
- досрочное изъятие - начисление 2% в течение 1 месяца, 3% - в течение 2 месяца, 4% - в течение 3 месяца
- при пролонгации - подарок "ArCa Classic"

вклад Ширакаци
Сила красоты

- 6 месяцев - 7% годовых
- от 1000 до 30000 USD или EURO
- досрочное изъятие - до 30 дней - 2%, после 30 дней - 3% годовых

вклад Маштоц
Величие любви

- 12 месяцев - 8% годовых
- от 1000 до 30000 USD или EURO
- ежемесячная капитализация или выплата процентов
- досрочное изъятие - до 30 дней - 2%, после 30 дней - 3% годовых

ЮНИБАНК
РЕАЛЬНЫЕ ИНВЕСТИЦИИ
53 98 70
www.unibank.am

СТАНДАРТНЫЕ ВКЛАДЫ В ДРАМАХ И ВАЛЮТЕ

Срок вклада	Выплата процентов	AMD	USD, EURO
		До 5 млн.	До 10.000
до востребования		0*	0*
31 - 90 дней	в конце срока	7,5	5,5
	ежемесячно	7	5
91 - 182 дня	в конце срока	8	6,5
	ежемесячно	7,5	6
183 - 364 дня	в конце срока	8,5	7,5
	ежемесячно	8	7
365 дней и более	в конце срока	9	8
	ежемесячно	8,5	7,5

Вклады превышающие 5 млн. AMD или 10 тыс. USD, EURO и/или сроком более 550 дней - по индивидуальным ставкам.
* в отдельных случаях процентная ставка определяется на договорной основе
Минимальная сумма срочных депозитов
- 50 000 AMD
- 100 USD, EURO

АДРЕСА ФИЛИАЛОВ ЗАО "ЮНИБАНК"

- Центральный офис:

г. Ереван, ул. Амиряна 12
тел: (3741) 539870
e-mail: unibank@unibank.am

- Филиалы в г. Ереване:

Филиал "КЕНТРОН"
ул. Абовяна 26
тел: (3741) 542431

Филиал "МАЛАТИЯ"
ул. Себастия 141
тел: (3741) 776627

Филиал "КОМИТАС"
ул. Комитаса 15/2
тел: (3741) 261838

- Филиалы в Армении:

Филиал "ВАНАДЗОР"
г. Ванадзор, ул. Тигран Мец 53
тел: (37451) 40872

Филиал "ГЮМРИ"
г. Гюмри, ул. Ахтанаки 1
тел: (37441) 33055

Զովազդի համար զանգահարել՝ 58-24-83

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիվ 65. Դասիլ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 14. 04. 2004 Գինը՝ 100 դրամ